

ՆԱԽԱԳԱՀ ԲՈՇԱՐԵԱՆ ՊԻՏԻ ՉՍԵԿՆԻ ՊՈԼԻՍ

Հայաստանի նախագահ Ռոպերտ Բոչարեան պիտի չմասնակցի յառաջիկայ Յունիս 25ին Պոլսոյ մէջ կայանալիք Սեյմ Տոլեան Տնտեսական Համագործակցութեան հանդիպումին:

Թրքական անգլիախոս «Թըրքիշ Տէյլի Նիուզ» թերթը անցեալ շաբաթավերջին հաղորդած էր, թէ «Թուրքիա պիտի հիւրընկալէ Հայաստանի նախագահ Ռոպերտ Բոչարեանը, Սեյմ Տոլեան Տնտեսական Համագործակցութեան հանդիպումի ժրէն ներս»: Թերթը նաեւ ըսած էր, թէ նախագահ Բոչարեան Պոլսոյ մէջ հանդիպում պիտի ունենայ Արաբիանի նախագահ Հայտար Ալիեւի հետ:

Հայաստանի նախագահի բաւեր 3ամիկ Պետրոսեան «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնած է, թէ նախագահ Ռոպերտ Բոչարեան Յունիս 24ին սկսեալ պաշտօնական այցելութիւններ պիտի տայ Պալէստինայ երկիրներ:

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻՆ

Մերսի երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն նախօրեակին ականջալոր եղանք ու կ'ըլլանք լիբանանահայ համայնքին հասցէին կատարուած պանապան յայտարարութիւններու: Կ'ըմբռնենք, որ ընտրութիւններու նախօրեակին, ընկալեալ սովորութեամբ շիկացած մթնոլորտի մէջ կը կատարուին գրգռիչ յայտարարութիւններ:

Այսուհանդերձ ընդունելի չէ, որ Լիբանանը բաղկացնող հիմնական համայնքներէն մէկը, իբրեւ հաւաքական - ընկերային գործելաձեւ, խնդրոյ առարկայ դառնայ անպատասխանատու յայտարարութիւններու և ընտրա - քաղաքական նկատառումներով լուսարձակներ գրաւէ:

Լիբանանահայ համայնքը Լիբանանը բաղկացնող գլխաւոր եօթը համայնքներէն մէկն է. բացարձակապէս չենք ընդունիր, որ ռեւէ քաղաքական գործիչ կամ որեւէ կողմ իրաւունք վերապահէ ինքզինքին լիբանանցիութեան դասեր պարտադրելու հայութեան և ընտրական թէ քաղաքական կեցուածքներ որոշել տալու: Մեզի համար ընդունելի չէ նաեւ, որ նման վերագրումներ ըլլան կամ վերաբերումներ ցուցաբերին լիբանանեան որեւէ համայնքի նկատմամբ:

Լիբանանեան պատերազմին ընթացքին, անկէ առաջ թէ անկէ ետք, փաստը ցոյց տուած է, որ լիբանանահայ համայնքին եւ հոգեւոր եւ քաղաքական ղեկավարութիւնը, իրարու հետ համախորհուրդ, միշտ յաջողած են որդեգրել լիբանանեան քաղաքական բեմին վրայ առողջ կեցուածքներ, որոնք կը դրուին ի նպաստ Լիբանանի բարորութեան և լիբանանահայութեան սկզբունքներուն ու կամքին արտայայտութեան:

Այս առիթով, մեր համայնքի յարանուանութիւններու պալատներուն կողմէն կ'ողջունենք իրոններմ շարքերով մասնակցելու Մերսի երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն:

ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ
(Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի)

ԳԵՐՊ. ՎԱՐԴԱՆ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ
(Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան Ընդհանուր Փոխանորդ)

ՎԵՐ. ՓՕԼ ՀԱՅՏՈՍԹԵԱՆ
(Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Կեդրոնական Մարմինի Ատենապետ)

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏ

Խորհրդարանը երէկ իր նախագահին՝ Նեպիհ Պըրբիի գլխաւորութեամբ, ինչպէս նաեւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի եւ կառավարութեան ներկայութեան, շարունակեց իր լիազօրմամբ նիստը՝ քննարկելու համար հիմնական երկու հարցեր. բնիկային հեռաձայնի հաստատութիւններու սեփականաշնորհում, քուէարկելու տարիքը 21ի փոխարէն 18ի նուազեցում:

Ընտրութիւններուն քուէարկելու տարիքը 21ի փոխարէն 18ի նուազեցնելու թղթածրարը քննարկուեցաւ առանց որեւէ որոշում տալու այդ գծով:

Ապա բնիկային հեռաձայնի ապապետականացումի հարցը ստեղծեց մեծ աղմուկ, հարց դնելով, որ բնիկային հեռաձայնի երկու հաստատութիւններն ալ օրինազանցութիւններ կատարած են եւ «մեծ» շահեր ապահոված: Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրբիի միջամտութեամբ խորհրդարանը հաստատեց, որ կառավարութեան պատկանող որեւէ հաստատութեան ապապետականացումի պարագային պէտք է երկրին խորհրդարանը քննարկէ այդ հարցը, որովհետեւ սահմանադրութեան 88րդ կէտը այդ կը պահանջէ:

Ելեւմուտքի նախարար Ֆուատ Սինիրա նպատակը նկատեց այդ օրինագիծի վաւերացումը, յայտնելով, որ մտնումը կասեցնելու միջոցներէն մէկն է, սակայն խորհրդարանի նախկին նախագահ երեսփոխան Հիւսէյն Հիւսէյնի այդ օրինագիծին վաւերացումը նկատեց երկրին սահմանադրութեան դէմ առնուող քայլ մը, ընդգծելով, որ երկրին ընդհանուր պարտքը նուազեցնելու համար պէտք է առանձին «սնտուկ» ստեղծուի:

ՌՈՒՇԱՅԼՕ ԱԽԱՐՏԵՑ ՀԱՅԱՍՏԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի նախագահ Ռոպերտ Բոչարեան երէկ ընդունեց Ռուսիոյ Ազգային Անվտանգութեան Խորհրդի նախագահ Վլադիմիր Ռուչայլոյի գլխաւորութեամբ պատուիրակութիւնը: Առաջին հերթին, Ռուչայլո Բոչարեանի յանձնեց Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փուտինի շնորհակարարական ուղերձը, Հայաստանի Առաջին Հանրապետութեան հիմնադրութեան 84րդ ամեակի կապակցութեամբ:

Նախագահ Բոչարեան եւ Վլադիմիր Ռուչայլո մտքեր փոխանակեցին շրջանային եւ միջազգային անվտանգութեան խնդիրներու եւ Ռուսիա - ՕԹԱՆ յարաբերութիւններու վերջին զարգացումներու մասին: Ռուչայլո ընդգծեց Հայաստանի միջկառավարական տնտեսական յանձնաժողովի գործունէութեան աշխուժացման անհրաժեշտութիւնը: Հանդիպումին մասնակցած է նաեւ Հայաստանի Անվտանգութեան Խորհրդի նախագահ, պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան:

Վլադիմիր Ռուչայլո եւ Սերժ Սարգսեան երէկ ստորագրեցին «Հայաստանի եւ Ռուսիոյ Անվտանգութեան Խորհրդաններու աշխատակազմերու միջեւ Համագործակցութեան» արձանագրութեան ամբողջացման եւ «Միացեալ Յայտարարութեան» մասին փաստաթուղթ մը:

Ստորագրութեան արարողութիւնէն ետք, պատասխանելով լրագրողներու հարցումներուն, Ռուչայլո յայտնեց, որ կայացած խորհրդակցութիւնները առիթ տուած են վերստին քննարկելու կողմերու դիրքորոշումները համագործակցութեան հիմնական ազգային, շրջանային եւ միջազգային անվտանգութեան հարցերու շուրջ: Ռուսիոյ Անվտանգութեան Խորհրդի նախագահը տեղեկացուց, որ համաձայնութիւն գոյացած է հայկական կողմի սպառազինութեան արդիականացման եւ վերանորոգման ժամկէտներու երկարաձգման եւ Ռուսիայէն անհրաժեշտ ռազմական մատակարարումներուն մասին: Այս յայտնեց, որ քննարկումներուն մէջ մեծ տեղ յատկացած էր ռազմական ոլորտէն ներս փոխգործակցութեան եւ թէ Հայ պաշտօնատարները յստակ առաջարկներ ներկայացուցած են Հայաստանին զինուորական արհեստագիտութեան եւ զինամթերքի մատակարարման մասին:

Եւրոպայի այցելութեան ընթացքին իր Հայ պաշտօնակիցին՝ նախարար Սերժ Սարգսեանի կողքին, Վլադիմիր Ռուչայլո հանդիպումներ ունեցած էր նաեւ Հայաստանի Ազգային Անվտանգութեան նախարար Քարլոս Պետրոսեանի եւ ներքին գործոց նախարար Հայկ Յարութիւնեանի հետ: Քննարկուած են միջազգային հանրակցութեան, թմրեցուցիչի շրջանառութեան եւ կազմակերպուած յանցագործութեան դէմ պայքարի առնուող հարցեր: Կողմերը անդրադարձած են նաեւ ռուսական ռազմական ուսումնական բարձրագոյն հիմնարկներու մէջ Հայ զինուորականներու պատրաստութեան առնչուող հարցերու:

Ռուչայլոյի գլխաւորած պատուիրակութիւնը նաեւ այցելեց Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսին, որմէ ետք աւարտեց Հայաստան իր պաշտօնական այցելութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆ - ՍՓԻՌԵ Բ. ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ԱԽԱՐՏԵՑԱԿ ՄԵԾ ՇԵՆԱՆԿԱՐՆԵՐՈՎ



Հայաստան - Սփիւռք Բ. խորհրդաժողովը, որ իր աշխատանքներուն սկսած էր 27 Մայիսին, Երեքշաբթի 28 Մայիսին գումարեց իր եզրափակիչ նիստը, որուն նպատակն էր ամփոփել խորհրդաժողովի մասնագիտական աշխատանքային խումբերու քննարկումներու արդիւնքները եւ որդեգրել հաշակագիր մը:

Չնկատելով հայ ժողովուրդը՝ 1918ի մայիսեան յաղթանակին համար, նախագահ Բոչարեան հաստատած է, թէ «Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը հիմք է ոչ միայն ներկայ, այլեւ ապագայ Հզօր ու բարգաւաճ Հայաստանին, որուն նկատմամբ ունեցած հաւատարմութիւնը կ'ապրիք եւ կ'աշխատինք»:

նքնընթացեց Հայաստան - Սփիւռք Բ. խորհրդաժողովի հաշակագրի նախագահ Ծարժ. Էջ 10

1918 ՄԱՅԻՍ 28

ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԻՄՔ՝ ԱՊԱԳԱՅ ՀՉՕՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

ԿԵՍԵ ՆԱԽԱԳԱՀ ԲՈՇԱՐԵԱՆ

Հայաստանի Հանրապետութեան տօնին՝ Հայաստանի Անկախութեան 84րդ տարեդարձին առիթով, Հայաստանի նախագահ Ռոպերտ Բոչարեան հրապարակած է շնորհակարարական ուղերձ մը: Նշելով, որ «վեցհարիւրամեայ ընդմիջումէ ետք վերանորոգեալ Հայկական պետութիւնը, հակառակ իր գոյութեան կարճ ժամանակահատուածին, նոր ու յուսաւոր էջ մը բացաւ մեր ժողովուրդի պատմութեան մէջ»: Նախագահ Բոչարեան ընդգծած է, թէ պետականութիւնը ունեցող ազգի հոգեբանութիւնը ու գիտակցութիւնը դարձան սերունդէ սերունդ փոխանցուող արժէքներ եւ իրենց դրսեւորումները գտան 1988ի ազգային վերազարթումը:

Շնորհակարարով Հայ ժողովուրդը՝ 1918ի մայիսեան յաղթանակին համար, նախագահ Բոչարեան հաստատած է, թէ «Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը հիմք է ոչ միայն ներկայ, այլեւ ապագայ Հզօր ու բարգաւաճ Հայաստանին, որուն նկատմամբ ունեցած հաւատարմութիւնը կ'ապրիք եւ կ'աշխատինք»:

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՄԵԾ ՀԱՒԱՔ

Կազմակերպութեամբ՝ Ը. Յ. Դ. ԸՆՏՐԱԿԱՆ - ԶԱՐԴՉԱԿԱՆ ՍԱՐՄԻՆԻՆ

Ազգային յեղափոխական երգերով ԵՂՈՅ ԿՈՆՇԵՐՄԱՆ ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ընկերակցութեամբ՝ ՍԵՂՕ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ ԵՒ ԻՐ ՆՈՒԱԳԱՆՈՒՄՔԻՆ

Կը մասնակցին երգիչներ՝ ԱՐԱՐԱՏ ԱՇԱՐՈՆԵԱՆ ԿԱՐՕ ԿԱՊՈՒՏԱԿԵԱՆ ԸՐԱԿ ԿԱՅՄԱԿԵԱՆ ԿԻՔԵՆ ՏԻՇՉԵՔԵՆԵԱՆ

Ընկերակցութեամբ՝ ՇԱՆԹ ՏԻՇՉԵՔԵՆԵԱՆԻ ԵՒ ԻՐ ՆՈՒԱԳԱՆՈՒՄՔԻՆ

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 31 Մայիս 2002, երեկոյեան ժամը 9:00ին, «Շաղկոյեան» կեդրոնի կից գտնուող կառնառան մէջ:

KOHAR Symphony Orchestra & Choir of Gyumli, Armenia presents

All Time Armenian Favourites SEBOUH ABCARIAN Artistic Director & Conductor Guest Appearances by RAISA MKRTCHYAN IRINA ZAKYAN

PROMENADE Hotel ZALKKA

7 - 8 - 9 June 2002 at 9:00pm BIEL DOWNTOWN BEIRUT

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 84ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱԽՕՍՆԵՐ՝

ՎԵՐ. ՓՕԼ ՀԱՅՏՈՍԹԵԱՆ

ԵՄԱՅԻ ՀԱՒԱԹԵԱՆ

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 31 Մայիս 2002, երեկոյեան ժամը 7:30ին, «3. Տըր Մելքոնեան» բաւերասրահին մէջ:

ՄԵԹԵՆԻ ԵՐԵՍՓՈՂԱՆԱԿԱՆ
ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹՈՒԷՅՆԻ ԵՒ ԱՊՈՒ ՖԱՏԷԼ ՅԵՏՍ ԿՈՉԵՑԻՆ ԻՐԵՆՑ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ

Յառաջիկայ կիրակի օր Մեթենի մէջ կայանալիք երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն, որուն ընթացքին պիտի ընտրուի յոյն ուղղափառներու աթոռին համար երեսփոխան մը, հինգ թեկնածուներէն «Նահար» օրթոթի խմբագրապետ եւ ընդհանուր տնօրէն Ժորժան Թուէյնի եւ Ռիատ Ապու Ֆատել յետս կոչեցին իրենց թեկնածուները:

Թուէյնի յայտնեց, որ ընտրապայքարը ստացած է ալ ընդդէմ եւ չի ձգտիր միասնականութեան: Ան հակադրեց նաեւ Լիբանանի մէջ Համայնավար կուսակցութեան նախկին ընդհանուր բարտուղար Ժորժ Հատուի իրեն դէմ կատարած զրպարտութիւններուն, ընդգծելով, որ ինք չի ցանկար երեսփոխան ըլլալ, իրեն համար Լիբանանի ազատութիւնը եւ գերիշխանութիւնը կը մնան գերագոյն երազը, որուն տեսլականով կը գործէ ինք:

Միւս կողմէ, մարուն համայնքի Անթիլիասի առաջնորդարանը հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ ընդգծեց, որ Անթիլիասի առաջնորդարանը Մեթենի մէջ կայանալիք երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն մասնակցող թեկնածուներուն միջեւ խորութիւն չի դնել, այլ կը յուսայ, որ Մեթենի ընկալիչները իրենց խիղճով առաջնորդուին եւ գիտակցութեամբ ու ազատութեամբ քուէարկեն ինչպէս ալ թեկնածուին, որ յարմար կը նկատեն:

Հաղորդագրութիւնը կոչ կ'ուղղէր նաեւ, որ Ժորժանի զրպարտութեան վայել կարգ ու կանոնով կատարուի քուէարկութիւնը, առանց բանավէճեր եւ բաժանուններ ստեղծելու նոյն Ժորժանի գաւազներուն մէջ:

ՎԱՆԱՅ ՉԱՅՆ **ՎԱՆԱՅ ՉԱՅՆ**

Այսօր կէսօրուան ժամը 1:00ին կրնաք լսել մեր հարցազրոյցը՝ Ը. Յ. Լ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵՂԵՆԻՍԻԱՆ ԿՈՄՍԵԻ ԱՆՂԱՄ ՅՈՎԻԿ ՊԵՐԹԻՉԼԵԱՆԻ ԸՆԹ, Մեթենի երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն առիթով: Յայտագիրին կրկնութիւնը՝ ժամը 7:00ին:

ՄԱՀԱԶԴ

Ը. Յ. Լ. Ս. Թեմիլիբեան Կոմիտէն կը գուժէ իր շրջանի հաւատարիմ ընկերներէն՝

ՅԱԿՈՒ ԼԱԼՉԱՃԵԱՆԻ

մահը:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Սիրարփի Նալչաճեան
Տէր եւ տիկին Միհրան Նալչաճեան եւ զուտորր
Տէր եւ տիկին Յարութ Նալչաճեան եւ զուտորր
Տէր եւ տիկին Պողոս Կիրակոսեան եւ զուտորր
Տիկին Ալիս Տուգճեան եւ զուտորր
Տիկին Լուսին Հալաճեան եւ զուտորր
Տիկին Էմիլիանա Պիլեմեան եւ զուտորր
Տիկին Անայիս Մուրաֆեան
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մոռու-
նոյն, հօր եւ հարազատին՝

ՅԱԿՈՒ ԼԱԼՉԱՃԵԱՆԻ

(Ծնեալ՝ 1924ին)

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի 28 Մայիս 2002ին: Յուշարկաւորութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Չորեքշաբթի 29 Մայիսին, կէսօրէ ետք ժամը 4:00ին, Նոր Ատանա թաղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Մար Եւսեփ, Համբաշ թաղ, 2րդ յարկ, Հինգշաբթի 30 եւ Ուրբաթ 31 Մայիսին:

ՀԱԼԷՊ ՀԱԼԷՊ

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Յարութիւն Հալաճեան
Տէր եւ տիկին Պողոս Հալաճեան եւ զուտորր
Տէր եւ տիկին Կարո Հալաճեան եւ զուտորր
Տէր եւ տիկին Պարգե Հալաճեան եւ զուտորր
Տիար Ալեքսան Գորթոնեան եւ զուտորր
Տիար Ահարոն Քէօսեյան եւ զուտորր
Տէր եւ տիկին Յակոբ Գրաճեան եւ զուտորր
Տէր եւ տիկին Յարութիւն Գորթոնեան եւ զուտորր
Տէր եւ տիկին Վարդան Կարապետեան եւ զուտորր
Տիար Տիրան եւ օրդ. Ովսաննա Ահարոնեան
Տէր եւ տիկին Ճէյմս եւ Մարալ Մահապեան
Տէր եւ տիկին Շանթ Հալաճեան եւ զուտորր
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, քրոջ,
մեծ մօր եւ հարազատին՝

ՄԱՔՐՈՒՂԻ ՀԱԼԼԱՃԵԱՆԻ

(Ծնեալ՝ ԳՈՐԹՈՇԵԱՆ, 1923ին, Խարբերդ)

մահը, որ պատահեցաւ 27 Մայիս 2002ին: Թաղման պաշտուանքը կատարուեցաւ 27 Մայիս 2002, կէսօրէ ետք ժամը 5:00ին, Հայ Աւետարանական Խմբանուէլ եկեղեցին, Ազգիկ, Հայկապ:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին գաւազին Յարութիւն Հալաճեանի բնակարանը, Երեքշաբթի 28, Չորեքշաբթի 29 եւ Հինգշաբթի 30 Մայիս 2002, Երեկոյեան ժամը 7:00էն սկսեալ:

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐՈՐԸ

Լիբանանեան մամուլը իր 28 Մայիսի թիւով անդրադարձած է հայ երէք կուսակցութիւններու Ս. Գ. Հ. Կ. Ի. Ա. Կ. Ե. Հ. Յ. Գ. Ի. հաղորդագրութեան, ուր նշուած է, թէ հայութեան համար իրանական շահերը են ու կը մնան ամէն քան Վեր: Կարգ մը գրգռիչ կէցուածքներու արտայայտութիւններու ակնարկելով, կուսակցութիւնները կը գտնեն, թէ արեւելի լաւ է աշխատիլ երկրին բարեխառն համար, քան փորձել ներքին համայնքային հարցեր յառաջանել:

29 Մայիսի թիւով իրանական օրթոթերը լուսարձակի տակ կ'առնեն նոյն արտայայտութիւններուն իբրեւ պատասխան հայ երէք համայնքապետերու՝ Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ Եպ. Խաչերեանի, կաթողիկէ պատրիարքութեան ընդհանուր փոխանորդ Վարդան Եպ. Ազարեանի եւ Հայ Աւետարանական Միութեան Կեդրոնական Մարմնի ատենապետ Վեր. Պոլկո. Փոլ Հայտնութեանի հաղորդագրութեան, ուր անոնք կը շեշտեն, թէ հայ համայնքը կը հանդիսանայ Լիբանանի եօթը հիմնական համայնքներէն մէկը եւ կարելի չէ կասկածիլ անոր լիբանանցիութեան նկատմամբ, ինչպէս նաեւ ընդունելի չէ, որ ընտրութիւններուն կամ քաղաքական կեանքին գծով իրանական հայութեան դատարարութիւնը:

Տեղական գետնի վրայ, իրանական մամուլի արձարած գլխաւոր նիւթերուն կարգին է խորհրդարանի 28 Մայիսի նիստը, որուն ընթացքին ան վարչապետ 31 օրէնքներ: «Լիւն» այս մասին կը գրէ, թէ այս քայլով հաստատուեցաւ խորհրդարանի եւ կառավարութեան համախոհութիւնը:

Թիւրք: «Երեսփոխանական պարբերական մասնակցութիւնը այսօր թեր պիտի քուէարկէ քիչ քիչ անհամաձայն օրէնքին, փոքր քան փոխանութիւնն էր ետք», կը նշէ թերթը: Թերթերը նաեւ կը նշեն, թէ քուէարկուելիք հարցերու կարգին է ընտրողներու տարիքը նուազեցնելու պարագան:

«Տիար» իր առաջին էջի գլխաւոր լուրով կը գրէ. «Մեթենի մասնակի ընտրութիւններուն պայքարը հետզհետէ ակտիւ կը սրի, դատախաչութիւնը եւ կառավարութիւնը ընտրական ծանուցումներու հարցով կը միջամտեն, որուն դիմաց ընդդիմադիր ղեկավարները կը բոլորուին Ը.մ. Թ. Կ. Կ. կայանին շուրջ: Նախարար Էլիաս Մըր կ'առաջարկէ Մեթենի մէջ Գաւազան Միութեանի կառուցումը, որ վերջ պիտի դնէ երկու կողմերուն միջեւ ակտիւ քան յիսուն տարուան թշուարութեան: Անոնք նաեւ նշած են, թէ պաղեստինցի մը յաջողած է մտնու գործել հրեական քաղաքացիական վայրէջման վայրէջման սպանել 4 քաղաքացիական հրեաներ: «Անտար» կը գրէ, թէ, ըստ անկրկեան տեղեկագիրի՝ Հնդկաստանի Բաքի տանի միջեւ կորիպային պատերազմը կրնայ խլել 12 միլիոն զոհ: Ան նաեւ կը նշէ, թէ Փառլըմը ստիճ, թէ Միջին Արեւելքի խաղաղութեան համար անկրկեան օրագիր գոյութիւն չունի:

Տեղական մամուլի ներքին էջերուն մէջ տիրական տեղ կը գրաւեն Մեթենի մասնակի ընտրութիւնները եւ քաղաքական յարաբերութիւնները: Մարտի 28 Մայիսի նիստը, որուն ընթացքին կը քուէարկուին Լիբանանի կառավարութեան անդամները: Անոնք նաեւ լուսարձակի տակ առած են մայրաքաղաքի ինքնաշարժներու տէրերուն կատարած ցոյցերը:

Լիբանանեան մամուլը իր ներքին էջերով նաեւ անդրադարձած է հարաւորի մէջ սկսած ակնաւորութեան աշխատանքներուն: Անոնք նաեւ լուսարձակի տակ առած են մայրաքաղաքի ինքնաշարժներու տէրերուն կատարած ցոյցերը:

ՀԱՐՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայ Աւետ. քուէար. տեարք Պերճ, Հրաչ եւ Արա Սիսեանց եղբայրներէն՝ իրենց հանգուցեալ մօր Ալիս Սիսեանցի բարի յիշատակին 11,000 տոլար ստացաւ: Ան այդ, մեր հրապարակային շնորհակալութիւնը կը յայտնենք անոնց:

ՍՐՃԱՆԻ ՕԺԱՆԳԱԿՈՒԹԵԱՆ ՖՈՆՏԻՆ

● Սուրբ Գուլաճեանի մահուան քառասունըքն առիթով, Տեր եւ տիկին Ներսէս եւ Ազնի Չոլաքեան 50,000 Լ. ո.

365 ՕՐԵՐԷՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ

Տեր եւ տիկին Սարգիս Սարեան, Ստեփան Գարպոյաճեանի յիշատակին կը ստանձնեն օրուան մը ճաշի ծախսը՝ 300 տոլար եւ 200 տոլար կը նուիրեն հիմնադրամի ֆոնտին:

ԱԶԳ. ՆՈՒՊԱՐԵԱՆ ԽՐԻՍՏԵԱՆ ՎՈՐՄԱՐԱՆ (Թրիփոլի)

ՃԱՇԿԵՐՈՅՑ - ՊԱՐԱՐԱՆԴԵՍ

Բարձր հովանաւորութեամբ Փոխ վարչապետ

ԻՍԱՍ ՖԱՐԵՍԻ

Մասնակցութեամբ՝ սիրուած երգիչ ԵՐԱՉ ՎԱՅՑԱԿԵԱՆԻ
Ընկերակցութեամբ՝ ՍԵՂՈ ՊԱՐՏԱՍԱՐԵԱՆԻ

Չաբաթ, 8 Յունիս 2002ին, երեկոյեան ժամը 9:00էն սկսեալ, Թրիփոլիի
QUALITY INN համալիրի շքեղ սրահին մէջ:

ՄԱՅԻՍԵԱՆ ՓԱՌԱՏՕՐ

Հովանաւորութեամբ՝

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՍ Ա. ՎԵՐԱՓԱՌԻ

(Կաթողիկոս Սեծի Տանն Կիլիկիոյ)

Նախագահութեամբ՝
ԳԵՐԸ. Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ
(Բարեչաան Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի)

Կազմակերպութեամբ՝
Հ. Մ. Ը. Մ. Ի. ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Տեղի կ'ունենայ Կիրակի, 9 Յունիս 2002ին երեկոյեան ժամը 6:00էն սկսեալ, Պուրճ Համուտի Բաղաքապետարանի դաշտին վրայ:

ՊԱՌԱԿՏՈՒԱԾ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԵՄԱԿԱՏԸ

Մեթենի մասնակի ընտրութիւնը մեծ մարտահրաւիր մը եղաւ քրիստոնէայ ընդդիմութեան համար: Աւելի քան մէկ տարիէ Վեր ստեղծուած Քրիստոնէական համախմբումը Մեթենի մէկ արժող համար ներկայացաւ չորս թեկնածուներով:

Մարտի 28 Մայիսի մէջ կոչեց իր թեկնածուները, Կապրիէլ Մըր, Գասսան Մուխայպէր եւ Ռիատ Ապու Ֆատել: Աւելի քան մէկ տարի առաջ Մարտի 28 Մայիսի մէջ կոչեց իր թեկնածուները Քրիստոնէական համախմբումը: Մարտի 28 Մայիսի մէջ կոչեց իր թեկնածուները Քրիստոնէական համախմբումը: Մարտի 28 Մայիսի մէջ կոչեց իր թեկնածուները Քրիստոնէական համախմբումը:

Միւս կողմէ, Մարուն համայնքի Անթիլիասի առաջնորդարանը հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ ընդգծեց, որ Անթիլիասի առաջնորդարանը Մեթենի մէջ կայանալիք երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն մասնակցող թեկնածուներուն միջեւ խորութիւն չի դնել, այլ կը յուսայ, որ Մեթենի ընկալիչները իրենց խիղճով առաջնորդուին եւ գիտակցութեամբ ու ազատութեամբ քուէարկեն ինչպէս ալ թեկնածուին, որ յարմար կը նկատեն:

Հաղորդագրութիւնը կոչ կ'ուղղէր նաեւ, որ Ժորժանի զրպարտութեան վայել կարգ ու կանոնով կատարուի քուէարկութիւնը, առանց բանավէճեր եւ բաժանուններ ստեղծելու նոյն Ժորժանի գաւազներուն մէջ:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Ջարուհի Գասարեան
Տէր եւ տիկին Կարո Գասարեան եւ զուտորր
Տէր եւ տիկին Սարգիս Գասարեան եւ զուտորր
Տէր եւ տիկին Վազգէն Գասարեան եւ զուտորր
Տէր եւ տիկին Օհան Մախապեան եւ զուտորր
Տէր եւ տիկին Հայկազու Գասարեան եւ ընտանիք
Տէր եւ տիկին Յակոբ Ս. Գասարեան եւ զուտորր
Տուգճեան ընտանիք
Եսայեան ընտանիք
Եարտըմեան ընտանիք
Փափագեան ընտանիք
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մոռու-
նոյն, հօր, մեծ հօր, եղբոր, հօրեղբոր, քեռիին եւ
հարազատին՝

ՄԱՀԱԶԴ

Տիկին Ջարուհի Գասարեան
Տէր եւ տիկին Կարո Գասարեան եւ զուտորր
Տէր եւ տիկին Սարգիս Գասարեան եւ զուտորր
Տէր եւ տիկին Վազգէն Գասարեան եւ զուտորր
Տէր եւ տիկին Օհան Մախապեան եւ զուտորր
Տէր եւ տիկին Հայկազու Գասարեան եւ ընտանիք
Տէր եւ տիկին Յակոբ Ս. Գասարեան եւ զուտորր
Տուգճեան ընտանիք
Եսայեան ընտանիք
Եարտըմեան ընտանիք
Փափագեան ընտանիք
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մոռու-
նոյն, հօր, մեծ հօր, եղբոր, հօրեղբոր, քեռիին եւ
հարազատին՝

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 23 Մայիս 2002ին, Լուս Անճելուի մէջ:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Աւետիս Խանիկեան եւ զուտորր
Օրդ. Իտա Խանիկեան
Տէր եւ տիկին Սարգիս եւ Սեդա Ճոզիկեան
եւ զուտորր

Օրդ. Յասմիկ Խանիկեան
Տէր եւ տիկին Ռուբէն եւ Արփի Մուշեան
եւ զուտորր

Տէր եւ տիկին Արմէն եւ Նորա Մանասար
եւ զուտորր

Տէր եւ տիկին Յարութիւն եւ Անճէլ Խոջմաթեան
Տէր եւ տիկին Մեսրոպ Խոջմաթեան եւ զուտորր
Տիկին Սիրանոյշ Միսակեան եւ զուտորր
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ
մօր եւ հարազատին՝

ՎԵՐԹԻՆ ԽԱՆԻԿԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 26 Մայիս 2002, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուշարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Երեքշաբթի, 27 Մայիս կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆրէն Շրպպէի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Մար Մըլալի, Խանիկեան շէնք, 2րդ յարկ, Երեքշաբթի 28, Չորեքշաբթի 29 եւ Հինգշաբթի 30 Մայիսին:

ԱՅՍՕՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԸ ՀԱՄԱՆԻՆ ԹՈՒՐԻՔ ԱԿԱԳԵՄԱԿԱՆՆԵՐ

Չորսօրեայ այցելության մը համար այսօր Հայաստան պիտի հասնին Թուրքիոյ «Եւրոպական Ռազմավարական Հետազոտութիւններու կեդրոն»ի տնօրէն Ումիթ Օլտաթ, կեդրոնի Կովկասի բաժնի վարիչ Եաշար Քալաֆաթ, Թուրքիոյ «Հայկական Ուսումնասիրութիւններու Հիմնարկ»ի տնօրէն Օմէր Լիւթմէ եւ փոքրագէտ Մեհմէտ Սեփիլին: Այցելության նպատակն է հանդիպումներ ունենայ Հայաստանի մէջ գործող նոյնանուն ուսումնասիրութիւններու կեդրոններու ներկայացուցիչներուն հետ:

Այցելության աշխատանքային առաջին օրը՝ Յունիս 1ին, թրքական պատուիրակութիւնը հանդիպում պիտի ունենայ Մարդկային Չարագման Միջազգային Հիմնադրամի ներկայացուցիչներուն հետ, ապա պիտի այցելէ Հայկական Յեղասպանութեան թանգարան - հիմնարկ: Յաջորդ օրը նախատեսուած են հանդիպումներ Ռազմավարական Ազգային Հետազոտութիւններու Հայկական Կեդրոնի ներկայացուցիչներուն հետ, մասնակցութեամբ կեդրոնի ղեկավար Ռաֆֆի Յովհաննէսեանի: Անոնք նաեւ պիտի հանդիպին Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի պատմաբաններուն եւ դասախօսներուն հետ:

Կ'ենթադրուի, որ հանդիպումներուն ընթացքին քննարկուի Հայկական Յեղասպանութեան հարցը:

Նշենք, որ անցեալ տարի Անգարայի մէջ հիմնուած այսպէս կոչուած «Հայկական Ուսումնասիրութիւններու Հիմնարկ» իր պարբերաբերթին ու համացանցի կայքին մէջ հրատարակուած «ուսումնասիրութիւններու» ընդմէջէն կ'իրագործէ հակահայ յայն քարոզչութիւն:

ԼՕԽԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԵՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉԻ ԵՒ ՀԱՄԱՑԱՆՅԻ ԴՐԱԿԱՆ ԵՒ ԺՆՏԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԸ

«Համակարգիչը եւ համացանցը: դրական եւ թիտակաճ ազդեցութիւնները մեր ընկերութեան մէջ» թեմայով դասախօսական ձեռնարկ մը տեղի ունեցաւ երէկ, 29 Մայիս 2002ին, ԼՕԽԻ «Արաբսի Պուլլոգրեմեան» ընկերութեան կեդրոնի «Թեմակեան» սրահին մէջ:

Ներկաները ողջունելի եւ դասախօսութեան թեմային կարեւորութեան մասին հակիրճ կերպով անդրադառնալէ ետք, վերադառնալով ձեռնարկի շարքը օրուան բանախօսը՝ Լիբանանի Ամերիկեան Համալսարանի եւ Պէյրութի Ամերիկեան Համալսարանի դասախօս Յակոբ Փանոսեանը:

Յ. Փանոսեան անդրադարձաւ Համակարգիչներու ծագումին եւ զարգացումին՝ առաջին հաշիւի մեքենաներէն մինչեւ յայտնի սարքերը: Ապա ան ներկայացուց Համացանցի հոլովոյթը, անդրադառնալով անոր ընթացքին ընկերակալութիւններուն, ինչպէս՝ տեղեկութիւններու հասոյցի, ե-նամակի դրոշմները, զրոյց, առեւտուր, եւ այլն:

Յ. Փանոսեան Հետաքրքրական եւ մտաշնչիչ շարք մը օրինակներով բացատրեց Համակարգիչներու եւ յատկապէս Համացանցի գործելաձեւի «թեքնիք» կարգ մը բաժնիները:

Ապա բանախօսը ներկայացուց Համացանցի դրական եւ թիտակաճ ազդեցութիւնները: Շեշտելով հանդերձ, որ Համացանցը տեղեկութիւններու փոխա-



նակման եւ հաղորդակցութեան կարեւորագոյն միջոց կը հանդիսանայ, ան նշեց, թէ Համակարգիչին դիմաց երկար ժամեր անցընելը անհատը կը հեռացնէ ընկերային կեանքէն եւ կրնայ մոլորութեան վերածուիլ: Ան նաեւ խօսեցաւ Համացանցի կարգ մը անբարոյական կայքերուն՝ փոքրիկներուն եւ պատանիներուն վրայ ունեցած թիտակաճ անդրադարձին մասին եւ փոխանցեց շարք մը ցուցմունքներ մոլորութիւններու առաջը առնելու մասին:

Յ. Փանոսեան եզրակացուց, որ Համացանցին առաւելութիւնները կը գերակշռեն անոր թիտակաճ կողմերը, եւ հարկ է առաւելագոյն օգտուիլ անոր դրական կողմերէն, նուազագոյնի իջեցնելով անոր հասցուցած վնասները:

ԻՐԱՆԻ ԴԵՍՊՊԱՆԻՆ ԿՅՈՐԴԸ՝ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄՕՏ

Երէկ, 29 Մայիս 2002ին, Լիբանանի մէջ Իրանի դեսպանին կցորդը այցելութիւն մը տուաւ Անթիլիաս եւ հանդիպում ունեցաւ Արամ Ա. Կաթողիկոսին հետ:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան Լիբանանի կացութեան, Հայաստանի մէջ գումարած Հայաստան - Սփիւք Բ. խորհրդածոյցը, Իրանի հայութեան եւ Իրանի իսլամական հանրապետութեան ու Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան յարաբերութեանց կապուած շարք մը հարցեր:

ՆՇՄԱՐ ԱՐԴԱՆՈՑԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԸՆՏՐԱՐՇԱՒ

Ոչ ոք իրաւունք ունի իրանանահայութեան քաղաքական դասեր տալու, մասնաւոր լիբանանահայութիւնը չճանչցողները:

Դարձեայ պատկերասփիւռի «Էմ. Թի. Վի.» կայանէն ցեխարձակումներ կը կատարուին լիբանանահայութեան հասցէին: Ժորժ Հատիկէն ետք, անգամ մը եւս հանդէս եկաւ երէկ, հայութեան «փրկարար մասնակց» Րաֆֆի Մատէեան, միեւնոյն մտադրութեամբ, որ այլ բան չէ, եթէ ոչ ձաղկէլ Պուրճ Համուտը եւ անոր տէրերը, քաղաքական դասեր տալ լիբանանահայութեան:

Անշուշտ հայ մամուլի էջերէն չ'արժէր պատասխանել լուսանցքային հայանուն մարդոց, բայց որովհետեւ ընտրական հաշիւներով՝ բանաւոր լրատուամիջոցներէ տեղ կը տրուին անոնց, մենք հարկ կը պահանջ հակադէմոստրացիոններու շարժառնայինութեան: Այլապէս, իրամամբ չ'արժէր տեղ տալ, ժամանակ վատնել նման անցողակի մարդոց հասցէին երկու խօսք ըսելու համար:

Հետաքրքրական է, թէ հայութեամբ մտահոգ այս «փրկարար» ինչ հանգամանքով ինքն իրեն իրաւունք կու տայ խօսելու լիբանանահայութեան մասին: Ան մեր պագային կեանքին կամ ընդհանրապէս հայ կեանքին մէջ հեռուէն թէ մտնէ ետք եւ ո՞ր դերակատարութիւն ունեցած է, բացի իրաքանչիւր ընտրական հանգրուանի ստիկի նման բուսնէնով՝ պատկերասփիւռի կայաններէն ձառնուելու կատարելէ:

Ըսած ենք ու կը կրկնէք դարձեալ, որ լիբանանահայութեան անունով խօսելու համար կենսական է, նախապայման է դերակատար ըլլալ անոր պագային-հասարակական կեանքին մէջ: Չի բաւեր «եան» կրել կամ քանի մը կէս-կատար ու որձեւէզ բառերով եւ ոչ հայկական հնչիւնով հայերէն նախադասութիւն մը արտասանելու ճիշդ լինելու պատկերասփիւռի կայանէն՝ հայութեան իրրեւ թէ հիմնահարցերու մասին խօսելու համար:

Երէկ, իր ելոյթին ընթացքին, Մատէեան անկասաբար հայութեան հպարտանքին՝ Պուրճ Համուտի հասցէին վարկաբեկիչ արտայայտութիւն ունենային, Պուրճ Համուտը միայն իր «աղբանոց»ով եւ թերի ենթակոչուողով դիտելու մակերեսային մտեցումէն, ան նաեւ ինքն իրեն իրաւունք տուաւ Մեթի մասնակի ընտրութեան գծով այս կամ այն թեկնածուին նկատմամբ լիբանանահայութեան դիրքորոշումը դատելու եւ քաղաքական դասեր տալու:

Չերկարենք, որովհետեւ մեր ժողովուրդը երէկ լսեց այդ անհեթեթ ելոյթին ամբողջութիւնը: Մենք ի պատասխան այդ ցնդարանութիւններուն, հետեւեալը կ'ըսենք ոմն Րաֆֆի Մատէեանին:

Ա.- Լիբանանահայութիւնը երբեք կարիք չունի քաղաքական դասեր լսելու երկրորդական, անդիմագիծ, օփորթիւնիսթ եւ առիվիսթ մարդոցմէ: Հայ քաղաքական երէք կուսակցութիւնները յայտարարած են իրենց ընտրական դիրքորոշումները: Հայ յարանուանութեանց հոգեւոր պետերը հրապարակած են արդէն միացեալ համապատասխան կոչ: Հետեւաբար լիբանանահայութեան ղեկավարութիւնը հաստատ գիտէ թէ քաղաքական ինչ քարի վրայ կը կոխէ ու կարիքը չունի երկնուն մանուկներուն կարծիքին ու քաղաքական թելադրանքներուն: Եթէ այդքան փայլուն ու սուր միտք ունի հայանուն այդ տղան, ինչո՞ւ մինչեւ հիմա նկատառելի դիրք մը չէ յաջողած ապահովել ան ոչ միայն լիբանանահայ, այլ լիբանանեան քաղաքական բեմահարթակին վրայ:

Բ.- Ընտրական մարտավարութեամբ Դաշնակցութեան հասցէին կակուղ ու քաղաքավար ձեւանալու ճիշդ բաւարար չէ ձեռք երկարելու, որովհետեւ ըստածներուն բազմապատիկ ծանրութեամբ լուսանքներ տեղացուցած է ան նախապէս նոյնինքն Դաշնակցութեան հասցէին: Այս մարտավարութիւնը ի սկզբանէ պայտած է:

Գ.- Պուրճ Համուտը ունի իր սրբայան պատմութիւնը՝ լիբանանահայութեան արտին եւ յիշողութեան մէջ ու անկա մինչեւ օրս կը հանդիսանայ մեր անկրկնելի միջնաբերդը: Պուրճ Համուտ կը նշանակէ փոքրիկ Հայաստան, հայկական դպրոցներու, հայկական եկեղեցիներու, ակումբներու կեդրոն, իսկ Լիբանանի քաղաքացիական պատերազմի ամբողջ տեւողութեան՝ հայութեան ֆիզիքական գոյութեան միակ ապաստան, իր անմասն ու անձնուրաց պատկերով, նախատակներով: Իսկ այս բոլորին դիմաց՝ Պուրճ Համուտի մէջ միայն «աղբանոց» յիշելն ու յիշատակելը կը նշանակէ աղբանոցի մակարդակէն անդին չանցնիլ:

Հետեւաբար, Մատէեաններուն կը մնայ իրենց սահմաններէն դուրս չգալ եւ չժպրիիլ հայութեան քաղաքական դասեր տալու, այլ ձգտիլ միայն հայութեան դասեր քաղելու, եթէ անշուշտ ընդունակութիւնը ունին:

ՀՐԱՉ ՎԱՐԺԱԳԵՏԵԱՆ

ՍԱՐԿԱԽԳԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի տեսչութիւնը ուրախութեամբ կը յայտարարէ մեր հաւատացեալ ժողովուրդին, որ Բ. Ընծայարանի ուսանողներէն՝ Անդրանիկ Կիւ. Սրկ. Գուճաճեան, Միհրան Կիւ. Սրկ. Զեփուկեան, Շրայր Կիւ. Սրկ. Պետուրեան, Կարապետ Կիւ. Սրկ. Քեչիշեան եւ Զահարայից դասարանէն՝ Գեորգ Կիւ. Սրկ. Շաքարեան, Սահակ Կիւ. Սրկ. Պասիլեան, Վրժ Կիւ. Սրկ. Քեօզկեան, Անդրանիկ Կիւ. Սրկ. Կարապետեան, Յովսէփ Կիւ. Սրկ. Զիթիլեան եւ Ըսմբարձու Կիւ. Սրկ. Նազարեան, Կիրակի, 2 Յունիս 2002թ, պիտի ստանան սարկաւազական կարգ եւ ձեռնադրութիւն, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ:

Ս. եւ անմահ պատարագ պիտի մատուցէ, ձեռնադրութիւնը կատարէ ու քարոզէ՝

ԳԵՐԾ. Տ. ՏԻՐԱՅՐ Ա. ԵՊՍ. ՓԱՆՈՍԵԱՆ

Սկիզբ ժամերգութեան	Ժամը 8:00ին
Սուրբ պատարագ	Ժամը 9:30ին
Ձեռնադրութիւն	Ժամը 10:00ին
Քարոզ	Ժամը 11:00ին

Կը հրաւիրենք Դպրեվանքի բարեկամներն ու հաւատացեալ մեր ժողովուրդը, որ մասնակից դառնան մեր ուրախութեան եւ աղօթքն անոց ծառայական կեանքին համար:

ՏԵՄՉՈՒԹԻՒՆ ԴՊՐԵՎԱՆՈՒՅ

Ի ՊՍՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ

Ընդ բարձր հովանաւորութեամբ՝

Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀԱՅ ԵՐԱՎՇՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԵՐԳ

Կատարողութեամբ՝

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԿՈՍԻՏԱՍ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻՆ (Այնճար)

Դեկավար՝

ՊԱՐԳԵՒ ԹԱՍԼԱԳԵԱՆ

Ուրբաթ, 7 Յունիս 2002ին, երեկոյեան ժամը 8:30ին, կաթողիկոսարանի շրջափակին մէջ:

ՄՈՒՏԸ ԱՍՏԷ

30th Anniversary of "KOMITAS" Choir

Y. Concept Presents

HAMAZKAYIN "BAROUYR SEVAG" BRANCH, ANJAR

KOMITAS CHOIR

Barkev Taslakian
Art Director & Conductor

Under the patronage of his Excellency
Mr. Areg Hovhannissian
Ambassador Extraordinary and Plenipotentiary of Armenia in Lebanon

Friday, May 31, 2002, at 8:30 pm
A.U.B. "Assembly Hall" - Beirut

Tickets: 20.000 lbp 15.000 lbp 10.000 lbp

For Free Delivery, please Call:
03 / 324 585 - 03 / 523 743 - 03 / 981 322
04 / 416 706 - 04 / 523 743 - 08 / 620 538

Sponsored by: **G.V.N. Computers**

CoSponsored by: **Nahl** **Nammour Design Group**

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՄԵԹՆԻ ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱԻԱՔ

Կազմակերպութեամբ՝

Շ. Յ. Դ. ԲԱՐՈՉԳԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԻՆ

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 31 Մայիս 2002, երեկոյեան ժամը 8:30ին, «Շաղոյեան» կեդրոնի կից գտնուող կառատան մէջ:

ԳԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՐԱՍ Է ԸՆԴԱՌԱՋ ԳՆԱԼ ԵՒ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՄԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒԺԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ Ը. Յ. Դ. ԲԻՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Ստորև կը ներկայացնենք Հայաստան - Սփիւռք Բ. խորհրդածոշովի բացման նիստին Հ. Յ. Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանի արտասանած խօսքը:

Սիրելի ժողովուրդ, Պատիւ ունեմ՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան միաձուլ ընտանիքի անունից, ողջունելի համահայկական այս երկրորդ համախմբումը:

Մենք այստեղ ենք գործնական աշխատանքի ակնկալիքով:

Մեզ ամէնքս ալ այստեղ է բերել այլեւս պարզ այն գիտակցութիւնը, որ պետութիւններ, ժողովուրդներ ինքնուրուի մը տեղը կարող ենք պահովել, եթէ միասին ենք: Եթէ հայոց անկախ պետականութիւնը եւ հայկական կազմակերպ Սփիւռքը գործում են մէկ եւ նոյն ուսման արժանի ուղիներով, գործում են համակարգուած, փոխարացելով միմեանց:

Եթէ անգամ Հայաստանը մօտ ապագայում դառնայ ուժեղ, տնտեսապէս վարգացող, իր քաղաքացիներին արժանապատի կեանքը երաշխաւորող, առաւելագոյնս ինքնուրուի երկիր (ինչն ամէնքս գործն ու երապանքն է), դարձեալ մեր պետութեան ուժը անբարարար է աշխարհաքաղաքական վարգացումներում ծանրակշիռ դերակատարութիւն ստանձնելու: Բայց եթէ կարողանանք կազմակերպել եւ այդպիսի պետութեան ուժին գումարել Սփիւռքի կարողականութիւնը, Հայաստանն ու հայութիւնը աշխարհում իրօք հաշուառելի գործօն կը դառնան:

Այո, անկախ պետականութիւնը բարձրագոյն արժէք է, բայց այն նաեւ միջոց է աշխարհում ազգի լաւագոյն ինքնադրսեւորման նպատակի համար:

Այո, Սփիւռքը մեր պատմական դժուար ձակարակ արդիւնքն է, որ թուլութեան նշան է եղել երկար ժամանակ: Բայց ներկայ աշխարհում, երբ ժամանակն ու տարածութիւնը նահանջել են մտքի եւ կազմակերպութեան ուժի առաջ, մենք կարող ենք ու պարտաւոր ենք մեր թուլութիւնը հսկայական առաւելութեան վերածել: Եւ սա ամէնուրեք. ե՛ւ քաղաքական, ե՛ւ տնտեսական, ե՛ւ հոգեւոր - մշակութային ոլորտներում:

Մեր ընդհանուր նպատակի իրագործման ձանապարհին հիմնական խնդիր է Հայաստանում եւ Սփիւռքում ազգային արժէքներով, պետական շահերով առաջնորդուող, պարկեշտ, բանկմաց, նոր ժամանակներում գործելու ընդունակ, միասնական ընտրանիի ձեւաւորումը. քաղաքական, տնտեսական, հոգեւոր - մշակութային նւթերի:

Հայաստանին ու հայութեանը անհրաժեշտ է երեք բան.

Առաջինը՝ կազմակերպութեամբ: Այսօրուայ աշխարհում ամենապարզ ուժը միտքն է, կազմակերպութեամբ միտքը:

Երկրորդը՝ վերը նշուած ընտրանիի գոյութիւնն է:

Երրորդը՝ կազմակերպութեամբ աշխատանքը ե՛ւ Հայաստանում, ե՛ւ հայութեան մէջ ընդհանրապէս: Միայն այս ապահովելով կը կարողանանք համընթաց քայլել քաղաքակիրթ աշխարհի հետ:

Դանդաղ կշռոյթով կարգանա-

լը դանդաղ կշռոյթով կազմակերպուելը մեզ համար հենանկարն է: Մենք պարտաւոր ենք կարուկ, համարձակ նպատակներ դնել եւ իրագործել դրանք, որ ինչ որ պահի հաւասարուենք վարգացած ժողովուրդներին ու դիմանանք այլ չափումներով ընթացող ազգերի մրցակցութեանը:

Եւ համոզուած եմ՝ մենք ունենք այդ ներուժը ե՛ւ Հայաստանում, ե՛ւ Սփիւռքում: Մենք կարող ենք եւ պարտաւոր ենք այդ անել:

Ցաւօք, մենք շատ ժամանակ ենք կորցրել: Ծարունակում ենք կորցնել:

Որքան է՛ պատճառներն *օսիւնք-թիւ*, աններելի է, որ Հայաստանում բարոյաւորութեան արժանիքները անտողջ է, քաղաքական համակարգը՝ լիարժէք չկայացած, *կոռուպցիան* ու հովանաւորչութիւնը՝ համատարած, *սոցիալական* արդարութեան, համերաշխութեան գաղափարները՝ ոտնահարուած:

Ոչինչ այնքան ու այնպէս չի յուսալքում, նպատակապետ չի դարձնում հայ մարդուն, որքան անարդարութեան, անօրինակութեան աղաղակող, անպատիժ դրսեւորումը:

Պէտք է սթափուել այլեւս: Իրավիճակը կտրուկ բարեփոխելու քաղաքական կամքն ու վճռականութիւնն է անհրաժեշտ: Եւ երկրի բարձրագոյն ղեկավարութիւնից մենք պահանջում ենք այդ կամքն ու վճռականութիւնը:

Իբրեւ սեփական հայրենիքում գործող լիարժէք քաղաքական կուսակցութիւն՝ Դաշնակցութիւնը պարտաւոր է գործուն մասնակցութիւն բերել երկրում պատասխանատուութեան, բարոյականութեան, արդարութեան սկզբունքներին հաստատմանը:

Միայն ժողովրդավարութեան հետագայ խորացմամբ. իրապէս քաղաքացիական հասարակութեան ստեղծմամբ, օրէնքի գերիշխանութեամբ, իրաքանչիւր անհատի եւ հայ հաւաքականութեան շահերի պաշտպանութեամբ մենք կարող ենք մի քայլ առաջ, մի գուրի բարձր լինել Հարաւային Կովկասի այս բարդ, հակասական տարածաշրջանում: Մենք այլ ելք չունենք:

Խնդիրները շատ են նաեւ Սփիւռքում: Հատուածական շահեր, անհանդուրժողութիւն, յարմարուող տկարութիւն, օտարում Հայրենիքից ու հայկականութիւնից:

Ու դարձեալ ելքը կազմակերպուելն է, իբրեւ հայ ապրելը ե՛ւ պատիւ, ե՛ւ ձեռնտու դարձնելը:

Այստեղ եւս Դաշնակցութիւնը պարտաւոր է ընդառաջ գնալ, մասնակցել մեր ընդհանուր ուժի կուտակման համակարգուած գործողութիւններին:

Հայրենակիցներ, Մեր առջեւ ծառայած են բազմապէս ու բարդագոյն մարտաւորութիւններ, որոնց քայլ առ քայլ հանգուցալուծումը մեր պատուի ու արժանապատուութեան խնդիրն է. Հայոց պետականութեան, հայկական Սփիւռքի հպօրացում, Արցախ, Հայաստանի տնտեսութեան վարգացում, *սոցիալական* արդարութեան հաստատում, բարոյաւորութեան արժանիքները անտողջացում եւ վերջապէս, մեր ապագայի հանդէպ հայ մարդու հաւատի վերականգնում: Նաեւ օրախընդիր ու բացառիկ կարեւոր մի հարց են բարձրացնում այստեղ՝ Արցախի ու Հայաստանի սահմանամերձ շրջանների վերաբերյալ:

Այս ամէնը ջանք ու նուիրումով պետք է պահանջում: Եւ ինքնապատու:

Արժանի լինենք մեր ժամանակին: Արժանի լինենք մեզ բաժին ընկած պատասխանատուութեանը:

ՄՐՑԱՆԱԿԱՐԱՇԽՈՒՄ

Հայաստանի Գաղափար Բնակարան 20 Մայիսին հրամանագիր մը ստորագրած է Հանրապետութեան Նախագահի մրցանակ շնորհելու մասին:

2001 թուականի մրցանակին արժանացած են:

Ա.- Բնական գիտութիւններու զարգացման մարզին մէջ՝ Հայկ Աղաճեան, Գագիկ Կրիւշկեան, Սուրբեկ Մանուէլեան եւ Նաիրա Մուրատեան:

Բ.- Թեքնիք գիտութիւններու եւ տեղեկատուական արհեստագիտութեան մարզին մէջ՝ «Աւիաինֆոթէլ» եւ «Էլքորուս - 2000» ընկերութիւնները:

Գ.- Արուեստի եւ գրականութեան մարզին մէջ՝ Արտաի Այվազեան, «Մանչեր» բեմական վեպին համար:

Դ.- Առողջապահութեան մարզին մէջ՝ Արթուր Շուքրեան:

Ե.- Մարդկային զարգացման եւ մարդկայնական արժէքներու, որոնց շարքին նաեւ ընկերային գիտութիւններու զարգացման մարզին մէջ՝ Յովհաննէս Բարսեղեան, Թադեոս Յակոբեան (յետ մահու), «Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան» աշխատանքին համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՆ՝ ԽԱՂԱՂԱՊԱՀ ԴԵՐ

Արխագիրի պաշտպանութեան առաջին փոխ նախարար Կիլիկ Ակրպա հաւանական նկատած է վրացեալ-խաղաղական տագնապի գոտիին մէջ խաղաղարար գործողութեան միջազգայնացումը, որ 1994 թուականէն ի վեր ԱՊՀ-ի հովանիին տակ կ'իրականացնեն ուստի խաղաղապահները:

«Փրայմ Նիուզ» լրատու գործակալութեան տրուած հարցազրոյցի մը մէջ Կ. Ակրպա ըսած է, որ խաղաղապահ ուժերուն մէջ կրնան ներգրաւուելի ստորաբաժանումները ԱՊՀ-ի այն երկիրներուն, որոնք չեն զինեք վրաստանը:

Այդպիսի երկիրներու շարքին ան նշած է Պիելդուստիան, Ղազախստանը, Ուզբեքիստանը եւ Հայաստանը:

ԿԻՆԵՐ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայաստանի լրտր խորհրդարաններու նախկին կին խորհրդարանականներուն աշխատանքները համակարգող խումբին նախաձեռնութեամբ, 23 Մայիսին արտասահմանեան երկիրներու հետ համագործակցութեան եւ մշակութային կապերու հազկական ընկերութեան կեդրոնատեղիին մէջ տեղի ունեցած է «Կանայք եւ ընտրութիւնները» ակումբին հիմնադիր ժողովը:

Պուժըրը, որ կը ղեկավարուի ձեմմա Անանեանի կողմէ, ձեւաւորուած է մէկ տարի առաջ Կիներու Հանրապետական խորհուրդի նախաձեռնութեամբ հրաւիրուած նախկին կին պատգամաւորներու առաջին ժողովին:

Ակումբին նպատակն է ներկայ պայմաններուն մէջ սատարել կին թեկնածուներու ընտրութիւններու մասնակցութեան: Այդ նպատակով մարզերուն մէջ եւս կը հիմնուին մարզային ակումբներ, ուր կ'ընդգրկուին նախապէս եւ ներկայիս հասարակական - քաղաքական եւ մասնագիտական աշխատանքի ներուժ ունեցող կիներ:

Ակումբի հիմնադիր ժողովին «Նոր քաղաքական մշակոյթի մուրթը Հայաստան» կարելիութիւններ եւ հետանկարներ» նիւթով զեկուցած է Երեւանի Պետական համալսարանի ընկերաբանական ամպիտիի վարիչ դոկտ. փրոֆ. Լիւզմիլա Յարութիւնեան: Քննարկուած է ազատ, արդար եւ թափանցիկ ընտրութիւններու կայացման գործին մէջ կիններու խնդիրներով զբաղող հասարակական կազմակերպութիւններուն մասնակցութեան հարցը:

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան 22 Մայիսին հանդիպում ունեցած է Մեծն Բրիտանիոյ Լորտերու Տան փոխ նախագահ պարունուհի Բարոլայն Քոքսի հետ: Հանդիպման ընթացքին քննարկուած են Քոքսի մարդասիրական ծրագիրներուն առնչուող հարցեր: Վերջինս Ս. Սարգսեանի տեղեկացուցած է, թէ կը նախատեսէ այցելել Արցախի Բերդաձոր գիւղը, որ 11 տարի առաջ ազբապէս ձեռնարկուած կողմէ ամբողջութեամբ հրեզուած եւ հայաթափուած է:

Ք. Քոքս պիտի այցելէ նաեւ Ստեփանակերտի ողնաշարային վնասուածքներով ազատամարտիկներու բուժման նպատակով բրիտանացիներու կառուցած վերականգնման կեդրոնը:

ՀԱՄԲԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆ ՀԱՍՏԵՆ
HAMPIG SASSOUNIAN
 CSP - L.A.C. B - 5 - 131 44750
 60-TH ST. WEST LANCASTER,
 CA, 93536 — USA

ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ

Կիրակի, 26 Մայիսին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ՝ ձեռամբ Զարեհ արք. Ազնաւորեանի, ծայրագոյն վարդապետութեան աստիճան ստացաւ Մեղրիկ վրդ. Բարեբեան:

Մայր տաճարին մէջ կատարուած արարողութեան ընթացքին, ձեռնադրիչ արքեպիսկոպոստ Զարեհ արք. Ազնաւորեանի խոստովանութեան եւ ուղղափառ վարդապետութեան կանոնական հարցերով եւ հրաւիրեց զայն հետեւիլ եկեղեցու հայրերու Ուղղափառ դաւանութեան, որուն ի պատասխան հայր սուրբը կարգաց Հաւատոյ Հանգանակը:

Իր քարոզին մէջ ձեռնադրիչ արքեպիսկոպոստ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբանութեան ծառայական ոգին եւ նուիրումը մեր ժողովուրդի հոգեւոր կարիքներուն: Բացատրեց հոգեւորականութեան կեանքին մէջ աստիճաններու բարձրացման իմաստը, իբրեւ նոր ծառայութեանց ընդառաջման մարտահրաւէր եւ ո՛չ թէ սոսկ պատիւ:

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾԱՐՔԻ ԾՐԱԳԻՐԸ ԳՈՐԾԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՐՈՒԵՅԱԼ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ու Լիւպոնի «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութեան հովանաւորութեամբ ծրագրուած Հայ Մատենագրութեան կոթողային մատենաշարին աշխատանքները գործադրութեան դրուեցան Մայիս ամիսին սկսեալ: Կիւլպէնկեանի ներկայացուցիչներուն կաթողիկոսարան ժամանումով իր վերջնական ձեւը ստացած համաձայնագրին հետեւութեամբ, տարեկան քանի մը հատորներու հրատարակութեամբ, մեծադիր 10 հատորներով լոյս պիտի տեսնէ ամբողջական շարքը՝ յատուկ ներածականներով ու ծանօթագրութիւններով: Մատենաշարը պիտի ձօնուի Հայ Գիրքերու Գիւտի 1600ամեակին:

Այս առիթով Արամ Ա. կաթողիկոս անգամ մը եւս իր բարձր գնահատանքը յայտնեց Կիւլպէնկեանի պատասխանատուներուն՝ Մայքըլ Եսայեանին եւ անօրէն Զաւէն Եկաւեանին՝ շնչելով հիմնարկութեան հայկական բաժանմունքին անսակարկ ծառայութիւնը հայ կրթութեան ու մշակոյթին, յատկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ճամբով Հայ գիրի ու դպրութեան ծաղկման բնագաւառին մէջ:

ՍԵՒԱՆԻ ՄԱԿԱՐԳԱԿԸ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՅ

Սեւանի վիտարանէն ստացուած տուեալներուն համաձայն, 22 Մայիսի դրութեամբ Սեւանայ լիճը ծովու մակերեսէն 49 սմ բարձր էր 1896,72 մեթր բարձրութեան վրայ:

Մայիսի առաջին 20 օրերուն Գեղարքունիքի մարզին մէջ անձրեւային տեղումները կազմած են 69 միլիմետր, Արփա - Սեւան ջրատարով եւ Սեւան թափով գետերով լիճին մէջ լեցումը է օրական միջինը 4,5 - 5 միլիոն խորանարդ մեթր ջուր, որուն շնորհիւ Սեւանի մակարդակը այդ ընթացքով բարձրացած է 16 սանթիմետրով: Ապրիլին լիճին մակարդակը բարձրացած էր 15 սանթիմետրով:

ՎՆԱՍ ՅՈՅՑ ՏՈՒԱԾ ԶԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԶԱՆԿԸ ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿՈՒԻ

24 Մայիսին Հայաստանի պետական եկամուտներու փոխ նախարար Արմէն Ալաւերդեան յայտնեց, որ Հայաստանի կառավարութիւնը մինչեւ 1 Յուլիս պիտի հրապարակէ վնաս ցոյց տուած բոլոր ձեռնարկութիւններու անունները՝ միաժամանակ նշելով, որ «Շահատուրքի մասին» օրէնքին մէջ փոփոխութիւններ կատարելէ ետք, բաւական դրական արդիւնք արձանագրուած է այս ուղղութեամբ եւ որոշ չափով կ'ընդհատուած է նման ձեռնարկութիւններուն թիւը:

Յայտնեց, որ 2000 թուականի տարեկան շահատուրքի հաշուարկներով, աւելի քան 4700 ձեռնարկութիւն ներկայացուցած էին 124 միլիոն դրամի կեղծ հարկային վնաս, որուն 30 առ հարիւրէն աւելին նախորդ տարիներու հարկային վնասն էր, որով հետեւ օրէնքով չէր արգելուեր հարկային վնասը փոխանցել յաջորդ տարիներուն:

ՍԻՆԵՑ

ԿԱՌՈՒՑՈՒՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԺԻՇԿԻ 9 ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐՈՒ

Հայաստանի առողջապահութեան նախարարութեան «Առողջապահութեան առաջնային պահպանման» ծրագրով Սիւնիքի մարզին մէջ նախատեսուած ընտանեկան բժշկի 17 գրասենեակներէն առայժմ կառուցուած է 3ը:

Կառուցուելիք 14 նոր գրասենեակներէն իննին շինարարութիւնը արդէն սկսած է: Մէկ ամիսէն աւելի է, որ տեղի կ'ունենան մարզի Ծիկահող, Առաջաձոր գիւղերու եւ Կապան քաղաքի Բաղաբերդ, Զորք եւ Գրանարներու թաղամասերու ընտանեկան բժշկի գրասենեակներու կառուցման շինարարական աշխատանքները: Երկուքական գրասենեակ կը կառուցուի նաեւ Գորիսի եւ Սիսիանի մէջ: Սիւս հինգ գրասենեակներուն շինարարութիւնը կը նախատեսուի սկսիլ մօտ օրէն:

Մինչեւ տարեկան ընտանեկան բժշկի գրասենեակներ պիտի ստեղծուին նաեւ Մեղրիի շրջանի լիճը, Շուանիձոր, Լեզվազ եւ Կարճեան գիւղերուն եւ Կապանի Լեռնագործներու թաղամասին մէջ:

«ԱՉԳԱԿ»Ի ՄԵՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգայն» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուած օր մը առաջ, ՄԻՆՆԵԻ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 5:00:

ՄԱՀԱՉԳՆԵՐԸ բացառութիւն են: Մահագր կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր. այնքան առեւ որ գայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ԹՐՔԱԿԱՆ ԴԻԻՎՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՀԵՏԵՒՈՂԱԿԱՆ Է, ԻՍԿ ՀԱՅԿԱԿԱՆԸ՝ ԽԱՐԽԱՓՈՒՄԻ ՄԷՋ

Հայաստանի անկախութեան վերականգնումէն ի վեր Հայաստանի եւ Թուրքիոյ յարաբերութիւնները քննարկումներու եւ արժեւորումներու առարկայ են: Անցնող 12 տարիներուն ընթացքին Թուրքիոյ մէջ իրար յարադրեցին քաղաքական տարբեր Հայաստաններու տէր իշխանութիւններ, Թուրքիոյ կառավարչութիւնները: Մեր դիւանագիտութեան ղեկավարը կը յայտարարէ, թէ Հայաստան պատրաստ է Թուրքիոյ հետ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու առանց նախապայմանի: Նոյնիսկ Թուրքիոյ կողմէ Հայաստանին նկատմամբ հաստատուած չըջարկումին վերացումը նախապայման չէ մեզի համար: Ինչո՞ւ: Այդ ինչպիսի՞ բարիքներ պիտի տեղան Հայաստանի գլխուն մնայուն չորս պայմաններ ունեցող Թուրքիոյ հետ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատումով:

Երկրորդ հարցը՝ դիւանագիտական յարաբերութիւններու պայմանաւորումն է երրորդ երկրի մը հետ ունեցած խնդիրի լուծումով, այս պարագային՝ Ազգայնականի հետ եղած հակամարտութեամբ: Կրնա՞յ Հայաստանն ալ Թուրքիոյ հետ իր յարաբերութիւնները պայմանաւորել Կիպրոսի հարցին լուծումով: Կրնա՞յ Հայաստանն ալ Թուրքիոյ հետ իր յարաբերութիւնները պայմանաւորել Ազգայնականի կողմէ Լեռնային Ղարաբաղի անկախութեան ճանաչումով կամ Զաւախքի համար Թուրքիոյ վրայով դէպի Սեւ ծով միջնացքի տրամադրումով: Այս հարցադրումներով կը փորձենք քողազերծել Թուրքիոյ քաղաքականութեան իսկական դիմագիծը, որ Հայաստանի հետ յարաբերութիւններ չհաստատելու յստակ ուղղութիւնը ունի: Բայց ի գուր ալ կը փորձենք, երբ Թուրքիոյ փոխ վարչապետ Պահլիզլի Պաքլի մէջ արդէն բացայայտորէն արտայայտուած է այդ մասին, այն պահուն մեր արտաքին գերատեսչութեան ղեկավար Վարդան Օսկանեան կը հանդիպէր Թուրքիոյ եւ Ազգայնականի արտաքին գործոց նախարարներուն հետ:

Սահմանակիր երկու երկիրներու փոխարձակ մտայնութիւններու ծիրին մէջ մեզի համար ամէնէն լուրջ հարցը այն է, որ իօզալէն մինչեւ էճեւիթ երկարող Թուրքիոյ իշխանութիւններուն համար մնայուն կերպով առկայ են թրքական նախապայմաններ, իսկ ո՞ւր են Հայկական նախապայմանները: Մեր դիւանագիտութեան ղեկավարը կը յայտարարէ, թէ Հայաստան պատրաստ է Թուրքիոյ հետ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու առանց նախապայմանի: Նոյնիսկ Թուրքիոյ կողմէ Հայաստանին նկատմամբ հաստատուած չըջարկումին վերացումը նախապայման չէ մեզի համար: Ինչո՞ւ: Այդ ինչպիսի՞ բարիքներ պիտի տեղան Հայաստանի գլխուն մնայուն չորս պայմաններ ունեցող Թուրքիոյ հետ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատումով:

Երկրորդ հարցը՝ դիւանագիտական յարաբերութիւններու պայմանաւորումն է երրորդ երկրի մը հետ ունեցած խնդիրի լուծումով, այս պարագային՝ Ազգայնականի հետ եղած հակամարտութեամբ: Կրնա՞յ Հայաստանն ալ Թուրքիոյ հետ իր յարաբերութիւնները պայմանաւորել Կիպրոսի հարցին լուծումով: Կրնա՞յ Հայաստանն ալ Թուրքիոյ հետ իր յարաբերութիւնները պայմանաւորել Ազգայնականի կողմէ Լեռնային Ղարաբաղի անկախութեան ճանաչումով կամ Զաւախքի համար Թուրքիոյ վրայով դէպի Սեւ ծով միջնացքի տրամադրումով: Այս հարցադրումներով կը փորձենք քողազերծել Թուրքիոյ քաղաքականութեան իսկական դիմագիծը, որ Հայաստանի հետ յարաբերութիւններ չհաստատելու յստակ ուղղութիւնը ունի: Բայց ի գուր ալ կը փորձենք, երբ Թուրքիոյ փոխ վարչապետ Պահլիզլի Պաքլի մէջ արդէն բացայայտորէն արտայայտուած է այդ մասին, այն պահուն մեր արտաքին գերատեսչութեան ղեկավար Վարդան Օսկանեան կը հանդիպէր Թուրքիոյ եւ Ազգայնականի արտաքին գործոց նախարարներուն հետ:

Այս վերջին հանդիպումը Հայկական դիւանագիտութեան խորհուրդին ներկայացրին վիճարկութիւնն է: Որովհետեւ, եթէ ինչ որ ձեռք հասկնալի էր Օսկանեան-ձե՛մ Նիւ Եորքի մէջ ունեցած անցեալի հանդիպումը (որ ի դէպ Թուրքիոյ կողմէ մեծ բարիք մը կը նկատուի, որ ընդունած է հանդիպիլ), ապա հասկնալի չէ Ռէյքիաւիքի հանդիպման Թուրքիա, Ազգայնական եւ Հայաստան ձեռք: Առաւել հասկնալի չէ այդ ձեռքի ընդունելի ըլլալը Հայաստանի կողմէ: Երկարող միջոցով հանդիպումը կրնայ դիւանագիտականորէն միայն երեք բարձրագոյն իշխանութիւններ ունենալ, կա՛մ Թուրքիա միջնորդի դեր կը կատարէ Ազգայնականի եւ Հայաստանի միջեւ, եւ կամ ալ Թուրքիա եւ Ազգայնական, ձեռք-ձեռքի տուած, Հայաստանի վրայ ճնշում կը փորձեն բանցնել Թուրքիոյ չորս պայմաններէն գոնէ երկուքը պարտադրելու համար: Իսկ երրորդը այն է, որ վերոնշեալ երկու նպատակները միաժամանակ կը հետապնդուին: Առաջինի կապակցութեամբ իրեցընենք, որ բազմիցս յայտարարուած է, որ Հայկական կողմին համար, Լեռնային Ղարաբաղի հարցին գծով, Թուրքիա չի կրնար ընդունելի ու պարկեշտ միջնորդ ըլլալ, երբ կը շարունակէ Հայաստանի նկատմամբ ունեցած իր թշնամական վերաբերմունքը: Իսկ միւս երկու հաւանականութիւններուն պարագան ինքնաբերաբար հասկնալի է, որ ընդունելի չեն: Հետեւաբար Հայկական կողմին անտուած այս քայլը ոչ մէկ արդարացում ունի եւ վարդան Օսկանեանի կատարած հերքումները, թէ «որեւէ նախապայմաններ չեն եղել» ոչ մէկ իմաստ ունին, երբ թրքական կողմը, յստակ ու բացայայտ, Պահլիզլիի, ձե՛մի եւ էճեւիթի միջոցով, կը յայտարարէ իր չորս կէտերէ բաղկացած նախապայմանները, որոնք ուղղուած են մեր պետականութեան ուղղակի գոյութեան դէմ, իսկ անկէ ետք՝ արդէն արտաքին գործոց նախարարութեան կարիքն ալ չունինք:

ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ԸՆԹԱՊԵՏՈՒԹԻՒՆ

«ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ՇՔԱՆՇԱՆՆԵՐԻ ԱՐԿԱԴԻՎՈՒՄԻ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Արկաղի Ղուկասեանի հրամանագրով Ռուսոյր Արդիւնաբերողներու Միութեան նախագահ Արկաղի Վոլսքին պարգեւատրուած է «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

Արկաղի Վոլսքին այս շքանշանին արժանացած է Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան տնտեսութեան զարգացման եւ զարաբաղեան տաղանակի լուծման աշխատանքներուն մէջ ունեցած նշանակալի ծառայութիւններուն համար, ինչպէս նաեւ՝ Յաղթանակի օրուան եւ իր ծննդեան 70րդ տարեդարձին առիթով:

ԱՐՑԱՆ

ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Այս տարի «Վերադարձ Արցախ» ծրագրով Արցախ (գլխաւորաբար Շահումեանի շրջան) տեղափոխուած է 7 ընտանիք: Ներկայի դրութեամբ կայ 700 ընտանիք, որոնք ցանկութիւն յայտնած են վերաբնակելու Արցախի մէջ: Յայտնենք, որ անցեալ տարի Շահումեանի, Մարտունիի, Հաղբուլի եւ Մարտակերտի շրջաններուն մէջ վերաբնակած է 48 ընտանիք:

Ընտանիքներու տեղափոխումը կը կատարուի Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պետական պիւտեճի հաշուոյն. այդ պիւտեճն ամէն տարի կարելիութիւն ունի ներառելու 200-250 ընտանիք: Ըստ մասուր հաշիւներու, իւրաքանչիւր ընտանիքի վրայ կը ծախսուի 5-8 հազար տոլար:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը վերաբնակող ընտանիքներուն համար սահմանած է արտոնութիւններու համակարգ մը: Ընտանիքի գլխաւորին կը յատկացուի 20 հազար դրամ, իւրաքանչիւր անդամին՝ 5 հազարական դրամ, 10 տարի պայմանագրով կը տրուի 200 հազար դրամ վարկ՝ տարեկան 0,5 առ հարիւր տոկոսով: Դրամական օգնութեանէն զատ, ընտանիքներուն կը յատկացուի սեփական տուն, 6 հազար քառ. մետր հող. անոնք 5 տարի ազատ կը կացուցուին տուրքերէ:

«Վերադարձ Արցախ» ծրագիրը Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը սկսած է կիրարկել 1994 թուականէն, իսկ Հայաստան անոր կը մասնակցի 2000 թուականի Հոկտեմբերէն:

150 ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ

Հայ եկեղեցւոյ հովանաւորութեամբ Հայաստանի մէջ կը գործէ 5000 աշակերտ ունեցող 150է աւելի կիրակնօրեայ դպրոց, որոնք մէջ կը դասուանող են Քրիստոնէական Դաստիարակութեան կեդրոնի դասընթացներ աւարտած 900 ուսուցիչներ:

Ըստ Ս. էջմիածինի տեղեկատուական համակարգին, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ Մայր Աթոռի հովանիին ներքեւ գործող Նորքի, Արարկիրի եւ Մալաթիոյ Հայկողեաց տուները կը համալսեն մանուկներն ու պատանիները արհեստագործական, երաժշտական, մարզական, պարային եւ այլ խմբակներու մէջ՝ միաժամանակ ապահովելով անոնց քրիստոնէական դաստիարակութիւնը: Քանաքեռի մէջ գործող Մանրանկարչութեան Արուեստի կեդրոնին մէջ երեխաները կ'ուսանին հայ միջնադարեան մանրանկարչութեան արուեստը:

ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐՈՒ ԱԼՊՈՄ

Վերջերս Միացեալ Նահանգներու մէջ գտնուող «Աթանեան» Մշակութային կեդրոնին նախաձեռնութեամբ հրատարակուած է «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» խորագրով կողմնակցութեամբ մը: Գիրքը կ'ընդգրկէ կեդրոնին մէջ գործող մանկական, գեղագիտական կեդրոնի սանձուք գծած շուրջ 200 գեղանկարներ: Այդ աշխատանքները «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» ծրագիրի շրջագծին մէջ անցեալ տարի ցուցադրուած են նաեւ Երեւանի մէջ:

Կարեւոր նկատելով իրեալ ծրագիրը՝ Հայաստանի մշակոյթի նախարարութեան Սփիւռքի վարչութեան պետ Սպարտակ Ղարաբաղեան նշեց, որ այդ մէկը Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի յուսալի կամուրջ է, որուն իրականացման համար այս տարի վարչութեան տրամադրուած է մօտ 8 միլիոն դրամ:

ԳԱԳԻԿ ՊՕՂՈՍԵԱՆԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ ՆԱԽԱՔԻՆՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԿԱՍԵՑՈՒԻ

Հայաստանի գլխաւոր դատախազութիւնը ոճրագործը անյայտ ըլլալուն պատճառով կասեցուցած է վարչապետ Անդրանիկ Արարատեանի վերահսկողական ծառայութեան նախկին պետ եւ խորհրդական Գագիկ Պօղոսեանի սպանութեան քրէական գործին նախաքննութիւնը:

Յիշեցնենք, որ Գագիկ Պօղոսեան անցեալ տարւան 11 Սեպտեմբերին իր բնակարանին դուռը գալու ժամանակ, մուտքի դրան մօտ տեղադրուած ձեռնառումքի պայթուածնէ մարմնական վնասուածքներ ստացած էր եւ հիւանդանոց փոխադրուելու ընթացքին մահացած էր:

ՇՈՒՇԻԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՕՆԸ՝ 11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Արկաղի Ղուկասեան, «էն. Քէյ. Արթ» կազմակերպութեան հիմնադիր եւ գործադիր տնօրէն Նիիրա Մելքոնեանի ուղղուած նամակով մը կը յայտարարէ, թէ 11-15 Սեպտեմբերին Շուշիի մէջ տեղի պիտի ունենայ համանուն փառատօնը եւ կոչ կ'ուղղէ Հայերուն՝ մասնակցելու եւ զօրակցելու անոր:

Իր կարգին, Ն. Մելքոնեան կը յայտնէ, թէ փառատօնին կազմակերպիչ խմբակը արդէն իսկ սկսած է իր աշխատանքներուն: Կը նպատակադրուի յառաջիկայ ամիսներուն գոյացնել 200 հազար տոլարի գումար մը, որ պիտի օգտագործուի այս տարուան փառատօնին իրականացման, ինչպէս նաեւ՝ Շուշի քաղաքին ենթացիկացներուն վերանորոգման համար: Կը նախատեսուի գումարը գոյացնել 10 հազար տոլար տրամադրող քսան նուիրատուներու միջոցով, որոնք պիտի կոչուին «Շուշիի փառատօնին մելիքներ»:

Յաղորդարար երկրորդ տարին ըլլալով տեղի ունեցող Շուշիի Միջազգային փառատօնը չորս օրերու ընթացքին պիտի մտադրէ երաժշտութեան, պարի, շարժապատկերի եւ տեսողական արուեստներու հարուստ յայտագիր մը, որ պիտի յայտարարուի Յուլիոսին: Յայտագիրին պիտի մասնակցին Լեռնային Ղարաբաղէն, Հայաստանէն եւ Սփիւռքէն արուեստագէտներ: Անցեալ տարուան փառատօնը, որուն ներկայ գտնուեցան աւելի քան 2000 հոգի, ունէր «Տեղականը համաշխարհայնական է» խորագիրը: Կը նախատեսուի այս տարուան փառատօնը նուիրել շրջանին մէջ խաղաղութեան եւ կայունութեան հաստատման:

Շուշիի Միջազգային փառատօնին մասին յաւելեալ տեղեկութիւններու համար կարելի է դիմել հետեւեալ հասցէին.

NK - Arts@Yahoo.com

ԸՍՏ ԹՈՒՐԵՈՅ

ՀԱՅԱՍՏԱՆ - ՍՓԻՒՌՔ ՀԱՐՈՒՄԻ ԿԱՐԿԵՆՆԵՐՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐ ՀԵՏԱՊՆԴՈՂ ՔԱՅԼ Է

Թրքական «Ջաման» թերթը, անդրադառնալով Հայաստան - Սփիւռք Բ. խորհրդաժողովին, մեծապէս կարեւոր նկատած է զայն, որովհետեւ, ըստ թերթին, նախագահ Ռ. Քոչարեանի առաջարկով անոր ընթացքին քննարկման առարկայ պիտի դառնան նաեւ Հայ-թրքական յարաբերութիւնները: Ասոր կողքին, Թուրքիա կը նախատեսէ, որ Հայաստան-Սփիւռք Բ. խորհրդաժողովը յայտարարութիւն մը կը հրապարակէ Հայկական Յեղափոխութեան միջազգային ճանաչման վերաբերեալ:

Թերթը կը նշէ, որ երկու տարի ընդմիջումէ ետք գումարուող խորհրդաժողովը պիտի հաւասարակըռէ վերջերս Ռէյքիաւիքի մէջ կայացած մէկ կողմէ Թուրքիոյ եւ Ազգայնականի միջոցով Հայաստանի արտաքին գործոց նախարարներուն միջեւ տեղի ունեցած հանդիպումը:

Հակառակ անոր որ Հայաստան - Սփիւռք խորհրդաժողովի օրակարգին կարեւորագոյն կէտերը նուիրուած են տնտեսական հարցերուն, այնուամենայնիւ Թուրքիոյ համար խորհրդաժողովը քայլ մըն է՝ Հայաստանի մէջ Սփիւռքի ազդեցութիւնը զօրացընելու ուղղութեամբ:

«Ջաման»ին տուած մէկ հարցազրոյցին մէջ Անգարայի Հայկական Ուսումնասիրութեանց Հիմնարկի տնօրէն Էօմէր Լիւթէմ յայտնած է, որ Թուրքիա ուղարկող կը հետեւի խորհրդաժողովին: Ան կը գտնէ, որ Հայկական Սփիւռքը ներկայիս աշխուժօրէն կ'աշխատի Հայաստանի կառավարութեան վրայ իր ազդեցութիւնը մեծցնելու ուղղութեամբ. այդ մէկը, ըստ Էօմէր Լիւթէմի, բաւարար պիտի ըլլայ «Հայաստան - Թուրքիա մերձեցման խոչընդոտ հանդիսանալու համար»:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Առ տիար Կարապետ Վահան Աճեմեան: Լիբանոնի Կայոթ Թեմի Դատաստանական Խորհուրդս իր 23 Մայիս 2002 թուականին կայացուցած Զ. ճիստին, որուն ներկայ չգտնուեցաք, զբաղեցաւ ձեր ընտանեկան հարցով: Այսու գեղք ճիստի կը իրականացնէ պաշտօնապէս, պաշտպանելու համար ձեր դատը: Ձեր ընտանեկան հարցին յատկացուած է. ճիստը տեղի պիտի ունենայ Դիսնոյքքի, 13 Յունիս 2002, կէսօրէ ետք ժամը 2:30ին, քաղաքի առաջնորդարճոնի մէջ, Ս. Նշան:

ԴԱՏԱՍԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵՐԿԻՐ ԴՐԱՍՏԱՎԱՅՐ ԱՆԱԿԵՐՏԱԿԱՆ, ՍԱՐՁԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՈՒՐԱՄԱ ԱՆԱԿԱՏԱԿԱՆ ԶՈՅՁ ԵՐԱՄՈՏՈՑՆԵՐ ԴԵՊՈ

ՄԵԽԱՆ ԵՒ ԱՐԶՆԻ
Ա. թէ 29 Յունիս, Բ. թէ 29 Օգոստոս 21 Օր: 10 ՕՐ ՊՏՆՅՏՆԵՐ ՕՐԱԿԱՆ 4 ԱՄԿԱՆ ՄԻՏԵՂԱՎ, ԿԻՉԱՆ, ՏՈՒՐԵՐԸ, ՕՐԱՆԱԿ ՏՈՒՐԸ

Պիճեղ
Միճէ 12 տարեկան՝ 399 \$, 12է 15 տարեկան՝ 495 \$, 15է 19 տարեկան՝ 595 \$, 19է վեր 780 \$

Սեղանեակ Կրկան Կատարուեան ամառային հանդէպի առիթով, շրջապատյ ղեպի Կիպրոս 14է 17 Յունիս: Փոք միայն 199է վկեպի:

Աճեճ օր առաւուրի իրիկուն՝ մեր գաւառեկան առեկան, շինք օրացարկերով ղեպի Կալէալ, միմաստան Լաքաքիւ, 6 ժեճ սկեպի:

ԿԱՄԳ. ԱՃԵՆԱԿ ԹՈՒՐԶ
Կեռ. 01/261177, 01/240654 ԵՎ 03/233978
Գործակցութեամբ՝ TRANSPORT & TOURISM SERVICES S. A. L.

«ԴԵՒՈՂՎ. Վ. ՏԵՐ ՄԻՆԱՍԵԱՆ»
ԵՐԱՄՃԵՏՈՒԹԵԱՆ ԵՎ ՊԱՐԻ ԿԵՂՈՍ
Ս. ԽԱՉ. ԶԱՆԼԵԱ

ԱՃԱԿԵՐՏԱԿԱՆ ՈՒՆԿԵՂՈՒԹԻՒՆ՝
Նախագահութեամբ՝
ԳԵՐ. ՂԱՅՐ ԱՆԴՐԱՆԻԿ Ծ. ՎՐԴ.
ԿՈԱՆԵԱՆԻ
Ժողովրդապետ Ս. Խաչ Եկեղեցւոյ

Ուրբաք, 31 Մայիս 2002, Երեկոյեան ժամը 8:00ին,
«Պետողլեան» սրահ, Հայ Կաթողիկէ Ս. Խաչ
Եկեղեցի, Զալաք:

ԵՐԱԵՐ


«Հայրենիք»



Կնոջական

ՄԵՐ ԶԱԻԱԿՆԵՐԸ ԵՒ ՄԵՆԸ

ՀԻՆԳ ԹԵԼԱԴՐԱՆՔ ՄԱՅՐԵՐՈՒՆ



Որպեսզի ձեր զաւակները առողջ ակունքներ եւ ծնօտներ ունենան, որպէսզի հետագային իրենց բերնին մէջ մետաղներ եւ «սրբագրող» սարքեր չկրեն, ահա թէ ի՞նչ կը թելադրէ մասնագէտ ատամնաբու-ժը:

- 1 -

ՆՈՐԱԾԻՆՆ ԿԵԹ ՏՈՒԷՔ

Ստինք ծծելով երեխան կը մարզէ ծնօտները, լին-տերը, ապագայ ակունքները: Արդարեւ, պիպերոնին քառլուքը եւ ծծակը կը ձեւափոխեն մանուկին ծնօտ-ներուն կառոյցը եւ ապագային հարցեր կը ստեղծեն:

- 2 -

ՈՒՂԱՎԱՅՆՑ ԳԻՐՔՈՎ ԿԵԹ ՏԱԼ

Ստինքէն ըլլայ, թէ պիպերոնով, երեխան կաթը պէտք է ծծէ ուղղահայեաց դիրքով, որպէսզի անոր կզակին վրայ որեւէ ճնշում չգայ, եւ բերնին ու ծնօտին շարժումները ազատ ըլլայ:

- 3 -

ԽՈՒՍԱՓԻԼ ԿԱՎՈՒՄ ՈՒՏԵԼԻՔՆԵՐԵՆ

12-18 ամսուան ընթացքին, երբ կը յայտնուին առաջին աղօրիքները, պէտք է երեխային վարժեցնել ծամել եւ ծնօտները աշխատեցնել: Հետեւաբար խուսափեցէք տեւաբար խիւսի նմանող ուտելիքներ պատ-րաստել, փոխն ի փոխ մանուկին տուէք կտրտուած պտուղ, կակուղ միսի կտորներ, հում բանջարեղէն...

- 4 -

ԽՆՉԵԼ ՍՈՐՎԵՑՈՒՑԷՔ

Երբ ձեր զաւակին քիթը խցուած է, ան կը ստիպուի բերնէն շնչել, երկար ժամանակի վրայ վերին ծնօտը եւ քիթը կը տուժեն այս սովորութեան:

- 5 -

ԱՐՏՈՆԵՑԷՔ ԾԱՄՈՆԸ

Ատամնաբուիները համաձայն են, որ 4-5 տարե-կանէն սկսեալ երեխաները ծամոն գործածեն, պայ-մանաւ որ առանց շաքարի տեսակը ըլլայ: Ծամոն ծա-մելը սքանչելի մարզանք է բերնի մկաններուն համար:

ԽՈՐԱԳԻՐ

ԲԱՆՋԱՐԵՂԻՆՈՎ ՓԱԵԼԼԱ

6 անձի համար անհր-րաժեշտ են.-

- 350 կրամ սովորա-կան բրինձ
- Մէկ կարմիր պղպեղ
- Մէկ կանաչ պղպեղ
- Երկու սոխ
- Երկու պճեղ սխտոր
- Երեք լոլիկ
- Երեք ափ սառած ոլոռ
- Քիչ մը սաֆրան
- Զիթաիւ
- Մանրուած ազատքեղ
- Աղ, սեւ պղպեղ



Պատրաստութիւն.- Պղպեղները պզտիկ խորանարդնե-րու վերածել:

Սոխն ու սխտորը շատ մանր մանրել: Լոլիկները եւս մանր, խորանարդա-ձեւ կտրտել:

Քիչ մը ձէթ տաքցնել, աւելցնել պղպեղները եւ 10 վայրկեան ձէթին մէջ դարձնել՝ տեւաբար խառնելով: Աւելցը-նել բրինձը, սոխն ու սխտորը: Երբ բրինձը կիսաթափանց դառնայ,

աւելցնել լոլիկը եւ 10 վայրկեան եւս եփել՝ տեւաբար խառնելով, ապա աւելցնել 2 զաւաթ ջուր, ոլոռնը, աղն ու պղպեղը, սաֆրանը եւ խառնել, յե-տոյ ձգել, որ եփի շուրջ 20 վայրկեան, մինչեւ որ հեղուկը ամբողջովին չքա-նայ:

Փախչուան փոխադրել ներկայանալի ամանի մը մէջ, երեսը ցանել մանրուած ազատքեղը եւ հրամցնել խորովածին կողքին:



ՈՒՏԵԼ ՀԱՄԱՐԱՎԱԿՈՒԹԻՒՆՎ ԿԵՐԱՎԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Չինաստանի մէջ բո-լոր ճաշատեսակները միա-



ժամանակ սեղան կու գան, իսկ ներկաները կ'ընտրեն այս կամ այն տեսակը՝ նայած իրենց առողջական վիճակին, սկզբունքներուն եւ տրամադրութեան:

Չինական բժշկու-թիւնը ուտելիքներուն սննդական արժէքէն չի մեկնի, չի հաշուեր կեն-սանիւթերու կամ հան-քայիններու տեսակները: Կարեւորը ուտելիքնե-րուն ազդեցութիւնն է՝ նայած իրենց համբուս-Այո՛, չինական սննդականոնը հիմնուած է «5 զխաւոր համբուս» վրայ, իւրաքանչիւր համ մեր գործարաններէն մէ-կուն վրայ դրական ազ-

ՉԻՆԱԿԱՆ ԽՈՂԱՆՈՅ, ՉԻՆԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Աւելի քան 2000 տարուան պատմութիւն մը ունի չինական բժշկութիւնը, որ ասեղնակիտու-նով, մատներու ծայրերու ճնշումով, բոյսերով եւ արմատներով կը դարձան տեսակաւոր հիւան-դութիւններ: Ծայրագոյն Ասիոյ միլիոնավոր ժո-ղովուրդներ կը հետեւին չինական դարմանու-մներու, իսկ Արեւմուտքը, որ երկար ատեն անա-ղող մնացած էր անոնց, արդէն իսկ որդեգրած է զանոնք եւ ներկայիս մեղմ բժշկութիւն պիտու-կին տակ յաճախ կը դիմէ չինական հազարա-

ճայ բժշկութեան միջոցներուն: Եթէ չինները կը հաւատան, որ ուտելիքները մեծ դեր կը խաղան մեր առողջութեան մէջ, կը հաւատան նաեւ, որ այդ ուտելիքները պատրաս-տողը, այսինքն՝ տանտիկինը, ինչպէս նաեւ անոր աշխատավայրը՝ խոհանոցը, որոշ սահմանումնե-րու ենթակայ են:

Այսօրուան էջով հակիրճ տեղեկութիւններ պի-տի տանք չինական բժշկութեան եւ խոհանոցի մասին:

Լի վայրի մը մէջ, որ եր-բեք խոնորուած պէտք չէ ըլլայ:

Սեղանին ձեւը շատ կարեւոր է չիններուն հա-մար, որոնք կը հաւա-տան, թէ կլոր սեղանը ներգաշնակութիւն եւ համբերաշնակութիւն կը ստեղծէ: Մնացեալները, յատկապէս եռանկիւն կամ բազմանկիւն սե-ղանները վէճի առիթ կու տան...

Կլոր սեղանին կեզրո-նը գետեղուած ծաղկա-ման մը՝ քանի մը սիրուն ծաղիկով, անկասկած կը կէն ուսին միջեւ):

2) Հարբուխի պարա-գային 2-3 վայրկեան ճնշել թեւի վրայ (արմու-կէն ուսին միջեւ):

3) Չինական թեւի պա-րագային 5 վայրկեան ճնշել կուրծքի վանդակին վարի բաժինը:

4) Պղնձեթեան պարա-գային 2 վայրկեան ճնշել պորտին ալ կողմը:

5) Փորի քրամփի պա-րագային 3 մատներով 2էն 3 վայրկեան ճնշել պորտին երկու կողմերը:

6) Յոգնութեան պա-րագային 5 վայրկեան ըմբամտով եւ ցուցամա-տով կամթել պորտին վա-րի բաժինը:

7) Ծովու անհանգըս-տութեան (զլխու պտոյտ, սիրտխառնուք) պարա-գային 5 վայրկեան ճնշել կուրծքի վանդակին եւ պորտին միջեւ գտնուող բաժինին վրայ:

8) Քունի խանգարումի պարագային 10 վայր-կեան ճնշել ծունկին վարի

● Չինական խոհանո-ցին արուեստը նաեւ կը կերպ-կընէ, թէ խոհանոցը խո-ղող առարկաներէն եւ հնադարեան յիշատակնե-րէն պէտք է ձեռքազա-տիլ, նաեւ՝ հանգստաւէտ աթոռներէն:

Պոհանոցէն պէտք է հեռացնել նաեւ աղմուկի աղբիւրները՝ ձայնաս-փիւռն ու պատկերաս-փիւռը:

● Բանջարեղէններն ու պտուղները պէտք է կտրտուին ճիշդ ձեւով: Այսպէս, կարելի չէ վա-րունգը միմիայն կլոր շերտի աղցանի մը պատ-րաստութեան ընթաց-

● Վերջապէս, չինները համոզուած են, որ կերպ-կուրներու հոտերը կ'ապականեն խոհանոցը եւ հետեւաբար, գայն տե-ւաբար պէտք է մաքուր օդին պարզել՝ պատու-հանները լայն բանալով եւ ի հարկին օդափոխիչ հաստատելով:

Եթէ չինական խոհա-նոցի արուեստին մասին յաւելեալ տեղեկութիւն-ներ կ'ուզէք, կրնաք կար-դալ Լիզ Մարիա Ֆահր-նաուի «Լը Ֆենկ Շուի աճ քուիզի» գիրքը, Ա.Տ.Ն. հրատարակչա-տուն:

ՇԱՐԼՈԹ ՌԱՄՓԼԻՆԿ

Անուանի դերասա-նուհի Շարլոթ Ռամփ-լինկ վերջերս մուտք գործած է երգարուեստի աշխարհ եւ արդէն իսկ հրապարակի վրայ է անոր առաջին Սի. Տի.Ս. «Կնոջ մը նման» անու-նով:



Այս առիթով անոր հետ կատարուած կարճ հարցազրոյցը կու տանք քարզամաքար:

● Ուրկէ՞ ուր երգարուեստը...

ՇԱՐԼՈԹ Ռ. - Յօրինող Ժան - Փիեռ Սթորա եւ Մի-չէլ Ռիվիոյը երեք տարիէ ի վեր զիս կը քաջալերեն:

Անմիջապէս չընդունեցի գաղափարը, բայց անոնց պնդումներուն վրայ որոշեցի դաշնակահարի մը հետ առանձին փորձել եւ որոշումի մը յանգիլ:

● Ձեր տան մէջ յաճախ դաշնակ կը նուագէք:

Շ. Ռ. - Այո՛, Պեթհոլմէն, Շոպէն, Երվան...

Նուագի կեդրոնացումը երկայի նման կը հանգստացը-նէ զիս:

● Նախապէս ոեւէ մէկը ձեզի առաջարկած է եր-գել:

Շ. Ռ. - Ժան Միչէլ Ժառ օրին մէկը ըսաւ, որ միա-սին ձայնապնակ մը պիտի պատրաստենք: Բայց մեր ճակատագիրները ուզեցին, որ այդ մէկը չյաջողի:

● Երգերուն մեծ մասը «խօսք եւ երգ» են, կրնա՞յ պատահիլ, որ օրին մէկը «ոտք» երգեր փորձէք մեկ-նաբանել:

Շ. Ռ. - Ինչո՞ւ չէ: Եթէ նեցուկ կանգնող ըլլայ, շատ բաներ կարելի է իրագործել, իսկ այս ձայնապնակս լաւագոյն փաստն է:



պղպեղները, բըրրի, կասիան, ժեճճամպրը, պրասը, սոխը, շոգամը յանձնարարելի ուտելիք-ներ են:

● Աղի համբերիկամնե-րու եւ միզային գործա-րաններու դաշնակիցն է: Հետեւաբար պէտք է սպառել ձկնեղէն եւ ծո-վային պտուղներ:

● ՔԱՂՏՐԸ կը դիւրացը-նէ մարսողութիւնը եւ դրական ազդեցութիւն ունի մարսողական գոր-ծարաններուն վրայ:

9) Յօդացաւի պարա-գային արմուկը ծալել եւ 10 վայրկեան ճնշել ար-մուկին ծալքէն դուրս գտնուող կէտին վրայ:

● Գիտէ՞ք, թէ չինա-կան խոհանոցին արուես-տը, որ դարձեալ շատ հին է, կ'ընէ, թէ ճաշը պէտք է ուտել խաղող եւ հաճե-

● Չինական խոհանոցի արուեստը, որ դարձեալ շատ հին է, կ'ընէ, թէ ճաշը պէտք է ուտել խաղող եւ հաճե-

● Գիտէ՞ք, թէ չինա-կան խոհանոցին արուեստը, որ դարձեալ շատ հին է, կ'ընէ, թէ ճաշը պէտք է ուտել խաղող եւ հաճե-

● Գիտէ՞ք, թէ չինա-կան խոհանոցին արուեստը, որ դարձեալ շատ հին է, կ'ընէ, թէ ճաշը պէտք է ուտել խաղող եւ հաճե-

ԿԸ ՆՈՒՒՐԵՆ

●Նիրվա Տարագճ-
եան - Ոսկերիչեանի
մահուան առիթով...

Գիք 30,000 լ.ո., Պշար
Շիմէլլի եւ ընտանիք
50,000 լ.ո., տեր եւ տի-

20,000 լ.ո., Կարո Ճը-
ղըլեան 20,000 լ.ո.,
Յակոբ Բէշիշեան

ԹՐԱՏԻ ԸԱՅ ԱԲԵՏ. ՎԱՐԺԱՐԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՔԵՐՄԷՍ
ՊԱԶԱՐ

Շաբաթ, 1 Յունիս 2002, առա-
ւօտեան ժամը 9:00Էն երեկոյեան
ժամը 6:00, վարժարանի բակին
մէջ:

«Ա,Զ,Գ,Ա,Կ»-ի

ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻՒԵՐԸ

«Ա,Զ,Գ,Ա,Կ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել
հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՏՈՔԹ. ԵՂԻԿ ԳՈՆԻԱԼԵԱՆԻ մահուան
քառասունըփն առիթով, հոգեհանգստեան
պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 2 Յունիս

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՎԱՐԱՍ ԹՈՎԱՍԱ ՄԱՆՃԵԱՆԻ մահուան քառա-
սունըփն առիթով, հոգեհանգստեան պաշտօն
պիտի կատարուի Կիրակի, 2 Յունիս 2002, Լաթաքի Ս. Աստ-
ուծածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԸՆՏՐԱՔԱՐՏԵ
ԱՆՀՐԱՄԺԵՇՏ Է

Երեսփոխանական մասնակի ընտրութիւն-
ներուն կարելի չէ մասնակցիլ առանց ընտրա-
կան քարտի:

Բոլոր այն քաղաքացիները, որոնք ընտ-
րական քարտ չունին, կրնան դիմել Ը. Յ. Դ.
հետեւեալ ակումբները.

●ՊԵՅՐՈՒԹԻ ՇՐՋԱՆ
Ազատամարտ ակումբ - Էշրեֆիէ՝ 01/
449924

Ռոստոմ ակումբ - Շայաշէն՝ 01/328471
Նշան Փալանճեան ձեմարան - Արեւըտ-
եան Պէյրոս՝ 01/375412

Տիգրան Ծամհուր ակումբ - Սար Մխայիլ՝
01/580141

●ՅԱՆԱՐԻ ԵՒ ՈՍՈՒՏԱՅԻ ՇՐՋԱՆ
Է. Ակնունի ակումբ - Ֆանար՝ 01/891546
Ռաուտայի ակումբ՝ 01/683372

●ԱՆԹԻԻԿԱՆ ՇՐՋԱՆ
Աղբալեան ակումբ՝ 04/722902
Նաքաշի կեդրոն՝ 04/410691

ժուլիի ակումբ՝ 09/933096

●ՉԱԼՔԱՅԻ ՇՐՋԱՆ
Գարեգին Նժդեհ ակումբ՝ 01/877661

●ՆԱԿՐ ՄՈՒԹԻ ՇՐՋԱՆ
Անի ակումբ՝ 01/895481

●ՊՈՒՐԸ ՀԱՄՈՒՏԻ ՇՐՋԱՆ
Սարգսապատ ակումբ - Մարաշ՝ 01/
262949

Ռուբեն ակումբ - Նորաշէն՝ 01/254322
Դրօ ակումբ - Արագած՝ 01/268647

Ազիրեան ակումբ - Սիս՝ 01/261636
Քաղաքապետարանի շէնքեր - «Բարգն
Սիւնի» կեդրոն՝ 01/489477

Թեփիլեան ակումբ - Ամանոս՝ 03/587498
Սար Եուսէֆի ակումբ՝ 01/254709

Սիկոլ Դուման ակումբ - Թրատ՝ 01/
260912

Քաղաքապետարանի շէնքեր՝ 01/263440

Ը. Յ. Դ. ԸՆՏՐԱԿԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

www.hamazkayin.com

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուսի սակարանին մէջ օտար դրամա-
հիշներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.

Table with 2 columns: Currency type and rate. Includes US Dollar, Euro, and others.

Table with 2 columns: Currency type and rate. Includes US Dollar, Euro, and others.

Table with 2 columns: Currency type and rate. Includes US Dollar, Euro, and others.

ԼՈՆՏՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԱԿԱՐԱՆ

Table with 2 columns: Currency type and rate. Includes US Dollar, Euro, and others.

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)
Դատական կամ իրաւական հարցի մը մէջ մի՛
մտնէք, որովհետեւ շահէ աւելի վնաս պիտի ունե-
նաք: Մնացեք խոհեմ եւ համբերատար:

☆ՅՈՒԼ (21 Ապրիլին 21 Մայիս)
Դրամական հարցի մը ճշդումը կատարելու հա-
մար մի՛ վարանիք խորհրդակցելու ձեր դրամատան
ներկայացուցիչին հետ: Անտարբեր կամ խուլ
ականջ մի՛ ձեռնարկ լուրջ հարցերու պարագային:

☆ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսին 21 Յունիս)
Պիտի չկարենաք ձեր տեսակետը պարտադրել
ձեր շուրջիններուն. բայց այդ ոչինչ կը նշանակէ
եւ այդ-
քան ալ կարելու չէ: Ուրեմն մի՛ ազդուիք:

☆ԽԵՑՑԵՑԻՆ (22 Յունիսին 23 Յունիս)
Շաբթուան այս առաջին օրը քիչ մը դժուար
պիտի ըլլայ, որովհետեւ կ'ուզէք փոփոխութիւններ
մտնել օրուան ձեր աշխատանքին մէջ: Ձեր
դժգոհութիւնը ցոյց մի՛ տար ուրիշներուն, որովհետեւ
մտահոգուելու լուրջ հարց մը չունիք:

☆ԱՌԻԻԹ (24 Յունիսին 23 Օգոստոս)
Մէկը ձեզ պիտի շլացնէ իր խօսքերով կամ
հրապոյրով, բայց ասիկա պիտի նմանի յարդիս
ստեղծած բոցին, որ շուտով պիտի անցնի:

☆ԿՈՅՍ (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր)
Անկարելի բաներու մասին մի՛ մտածեք. անպայ-
ման տեղափոխուելու փափաք մի՛ ունենաք կամ
տուն փոխելու մասին մի՛ մտածեք այսօր:

☆ԿԵՒԻՔ (Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր)
Եթէ մէկը վշտացուցած էր եւ ճիշդ օրին
ներդրուի չէք խնդրած, այսօր ժամանակ կ'է, որ
այդ քաղաքավար վերաբերումը ունենաք եւ
ըսեք այդ անձին թէ ներողամիտ գտնուի ձեր
զոյզումը ու շարտայայտուելու համար:

☆ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր)
Այսօր պիտի ունենաք առեւտրական գործառնու-
թիւն մը, որ շուտով պիտի տայ իր պտուղը: Ձեր
ջանքերը շարունակեցէք, որպէսզի միշտ շահիք:

☆ԱՆԵՂՆԱԻՈՐ (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր)
Ձղայնաճալու պատեաններ պիտի ստեղծուին
այսօր, բայց եթէ անտարբեր ու հանդարտ մնաք,
ոչ որ պիտի կարենայ խանգարել ձեզ: Կարեւորութիւն
մի՛ տար ջղա-
զար մարդոց արարքներուն եւ խօսքերուն:

☆ԱՅՏԵՂՋԻԻՐ (22 Դեկտեմբերին 20 Յունուար)
Կ'ըսեն, թէ դուք ձեզ միշտ դժուարութեան կը
մատնէք գուր տեղ: Եթէ այսօր նման պատեաններ
կամ պատուականներ ստեղծուին, խելքի եկէք
եւ մի
քաջախիղճ ձեզի դիմող պատեհապաշտները:

☆ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարին 19 Փետրուար)
Եթէ ծրագրի մը ունիք, ձեր հարազատները կամ
ձեզի մօտիկ անձերը հրաւիրեցէք, որպէսզի մաս-
նակից դառնան ձեր աշխատանքին: Անոնք
յաջանալու հրեքը պիտի անտեսուած կը զգան:

☆ՁՈՒԿ (20 Փետրուարին 20 Մարտ)
Ձեր աշխատանքի վայրին մէջ քիչ մը լարուած
ու
նշուած մթնոլորտ մը պիտի տիրէ: Հեռու մնացէք
վեճերէ եւ կռուական մարդոցմէ:

ՕՐԱՏԵՏՐ



Table with 2 columns: Time and Program Name. Includes various news and entertainment programs.

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5157

Պատրաստեց՝ Տ.Մ. ԱՐԱԶԱՐԵԱՆ

Table with 10 columns and 10 rows for lottery results.

Table with 2 columns: Lottery type and winning numbers. Includes 10/100 and 10/1000 lotteries.

Table with 10 columns and 10 rows for lottery results.

